AZG NEW PDF.qxd 03/05/2010 22:35 Page 1

Ազգ
Azg
4 ՄԱՅԻՍ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 80 (4460)
ISSN: 1829-1651

# «Հրանտ Դինքը բռնության գազանային ակտի զոհ է»

*Լրագրությունը ճգնաժամ է ապրում*

Այս մասին հայտարարել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար **Թոմաս Համմարբերգը**՝ խոսելով եվրոպական ԶԼՄ-ների ընդհանուր պատկերի մասին՝ Մամուլի ազատության օրվա կապակցությամբ:

Բացի Հրանտ Դինքից, որին Համմարբերգը համարում է «բռնության գազանային ակտերի զոհ Թուրքիայում», այդպիսիք են նաեւ Աննա Պոլիտկովսկայան՝ Ռուսաստանում, Գեորգի Գոնգաձեն՝ Ուկրաինայում, եւ Էլմար Հուսեյնովը՝ Ադրբեջանում. «Նրանք բոլորն էլ աննախադեպ խիզախություն են ցուցաբերել եւ իրենց նվիրեցին վիճահարույց քաղաքական խնդիրներում ճշմարտության վերհանմանը: Նրանց մահվան դեպքերը կարող են մյուս լրագրողներին ավելի զգուշավոր դարձնել եւ ինքնաքննադատություն առաջացնել», հայտարարել է Համմարբերգը:

Տես էջ 2

# Փոխհատուցման պահանջներով գիտաժողով Անկարայում

Մինչ աշխարհի չորս ծայրերում, ներառյալ Ստամբուլում, այս տարի տարբեր միջոցառումներ էին տեղի ունենում նվիրված Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին, Անկարայի «Պրինսես հյուրանոցում» ապրիլի 24-ին երկօրյա գիտաժողով է կայացել, որն իր բովանդակությամբ կարելի է համարել «աննախադեպ»:

Ըստ **Արա Սանջյանից** (Միչիգան, ԱՄՆ) ստացված տեղեկության, գիտաժողովը, որն անցկացվել է անվտանգության ծառայողների խստագույն հսկողության ներքո, Անկարայի «Մտքի նախաձեռնության ազատություն» հասարակական կազմակերպության մտահղացումն է եղել: Դրան մասնակցել են մոտ 200 հոգի, հիմնականում Ցեղասպանությունը ճանաչելու կողմնակիցներ եւ ակտիվիստ մտավորականներ, ինչպիսիք են Իսմայիլ Բաշըրչին, Բաշքըն Օրանը, Ռագիփ Զարաքոլուն, Թեմել Դեմիրերը, Սաիտ Չեթինօղլուն եւ Սեւան Նշանյանը:

Բաշըրչին առաջինն է, որ Թուրքիայում գիրք է գրել քրդերի մասին: Երկար տարիներ այդ պատճառով բանտարկվել է: Օրանը քաղաքագիտության դասախոս է եւ «Ներողություն» արշավի նախաձեռնողներից: Դեմիրերը գրող է, որն իր համարձակ մտքերի եւ գրությունների համար բազմիցս հետապնդվել է դատական կարգով: Չեթինօղլուն գիտաշխատող է եւ ակտիվ հասարակական գործիչ, Զարաքոլուն ճշմարտության մարտնչող պաշտպան է, իսկ Նշանյանը՝ մի քանի գրքերի հեղինակ եւ «Ակօս» թերթի հոդվածագիր:

Տես էջ 8

# Գերմանական KfW բանկը 18 մլն եվրո տրամադրեց վերականգնվող էներգետիկային

*Գերմանական կողմն այս տարի Հայաստանին կտրամադրի 120 մլն եվրո*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



«Վերականգնվող էներգիայի աջակցություն» ծրագրի շրջանակներում գերմանական KfW բանկը Հայաստանի Կենտրոնական բանկին տրամադրեց 18 մլն եվրո վարկ եւ 1,5 մլն եվրո դրամաշնորհ: Այդ մասին համաձայնագիրը երեկ ստորագրեցին KfW բանկի առաջին փոխնախագահ Ռոլանդ Զիլլերը եւ Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը:

Ներկայացնելով ստորագրված փաստաթուղթը, Արթուր Ջավադյանը հայտնեց, որ 2004-ին այս ծրագրով գերմանական կողմն արդեն տրամադրել էր 6 մլն եվրո վարկ եւ 1,5 մլն եվրո դրամաշնորհ: Այդ գումարով հայկական 6 բանկեր տվել են 14 վարկ, այդ թվում 8-ը՝ նոր կառուցվող ՀԷԿ-երի եւ 6-ը՝ գործող ՀԷԿ-երի համար: Բոլոր այդ վարկերն արդեն ամբողջությամբ օգտագործվել են, որեւէ խնդիր առաջացնող վարկ դրանց մեջ չի եղել: Իսկ ընդհանուր առմամբ, ըստ ԿԲ նախագահի, այս պահին հայկական բանկերի կողմից էներգետիկ ոլորտին տրամադրվել են 24,5 մլրդ դրամի վարկեր:

Գերմանական վարկերը Արթուր Ջավադյանը կարեւոր է համարում նաեւ այն առումով, որ դրանք տրվում են ոչ շուկայական տոկոսներով, այլապես դա ազդեցություն կունենա էլեկտրաէներգիայի սակագների վրա: Այդ պատճառով Կենտրոնական բանկը սահմանափակում է բանկերի կողմից տրամադրվող այս վարկերի տոկոսադրույքները: Արդեն ավարտված ծրագրով տրամադրվող վարկերի տոկոսադրույքները կազմել են 10,5 տոկոս, իսկ նոր տրամադրված վարկերինը կլինի 10,5-11 տոկոս շրջանակներում: KfW-ն 18 մլն եվրո վարկը Հայաստանին է տրամադրել 12 տարի մարման ժամկետով, որից 3 տարին՝ արտոնյալ:

Տես էջ 2

ԱՅԾԻԾ ՀԵՏՈ՝ ԻՆՉՊԵՍ ՄԻՇՏ

# Կաթողիկոսը շեհիդների ծառուղի չի այցելել

*Փաշազադեն հերքեց Մայր աթոռի պահանջից հետո*

Երեկ ադրբեջանական լրատվամիջոցները, վկայակոչելով Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ Ալլահշուքյուր Փաշազադեին, տեղեկություն էին տարածել, որ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 2-րդը ապրիլի 26-ին Բաքու այցելության ժամանակ գիշերով այցելել է Բաքվի շեհիդների պուրակ, որտեղ թաղված են Ղարաբաղի պատերազմում զոհված ադրբեջանցիները:

Մայր աթոռ սուրբ Էջմիածինը հանդես եկավ հայտարարությամբ՝ հերքելով ադրբեջանական լրատվամիջոցների տարածած տեղեկատվությունը: «Լուրը միանգամայն մտացածին է եւ իրականությանը չի համապատասխանում: Մայր աթոռը հերքման պահանջով դիմել է Կովկասի մահմեդականների վարչություն», «**Ազգ**»-ին փոխանցեցին Մայր աթոռի տեղեկատվական համակարգից:

Արդեն երեկոյան Կովկասի մահմեդականների հոգեւոր վարչությունը հայտարարություն տարածեց, որ Գարեգին Երկրորդի այցելության մասին Ալլաշուքյուր Փաշազադեին կեղծ տեղեկություն են տրամադրել: Հաղորդագրության մեջ Փաշազադեն հերքել է շեհիդների ծառուղի այցելության մասին խոսակցությունները, հավելելով, որ պատժել է կեղծ տեղեկություն տրամադրող աշխատակցին:

Վերջին մեկ շաբաթվա ընթացքում սա երկրորդ դեպքն է, երբ ադրբեջանական լրատվամիջոցները ստահոդ լուրեր են տարածում Գարեգին 2-ի Բաքվում կատարած այցելության մանրամասների վերաբերյալ: Մի քանի օր առաջ ադրբեջանական «Թուրան» գործակալությունն էր հաղորդագրություն տարածել, որ Բաքվում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպման ժամանակ կաթողիկոսը հայտարարել է, թե «հայկական կողմը պատրաստ է իր ուժերով ու միջոցներով վերականգնել Բաքվի հայկական եկեղեցին, եւ խնդրել էր Ալիեւի աջակցությունն այդ հարցում»: Վերոնշյալ աղբյուրի փոխանցմամբ՝ Ադրբեջանի ղեկավարությունը համաձայնել էր: Սակայն Մայր աթոռի մամլո դիվան **Վահրամ քահանա Մելիքյանը** հերքեց տեղեկատվությունը. «Նման բնույթի հարցի շուրջը այնտեղ խոսակցություն կամ քննարկում տեղի չի ունեցել: Լուրը չի համապատասխանում իրականությանը»:

Հիշեցնենք, որ ապրիլի 26-27-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը Ալլահշուքյուր Փաշազադեի եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Երկրորդի հրավերով մեկնել էր Բաքու՝ մասնակցելու միջազգային կրոնական գագաթաժողովին:

Հ. Հ.

# Պատրիարքական ընտրությունները հետաձգվում են

«Անկարան հեգնում է քրիստոնյաներին», վերնագրում է գերմանական dom-radio-ն, որը, ինչպես նաեւ ավստրիական kathweb կաթոլիկական լրատվական գործակալությունը մայիսի 3-ին հաղորդում են, թե Կ.Պոլսում մայիսի 12-ին նախատեսված աթոռակից պատրիարքի ընտրությունները հետաձգվում են՝ անորոշ ժամանակով:

Պատճառն այն է, որ թուրքական իշխանություններն արտոնություն չեն տվել, իսկ ավելի ստույգ, ինչպես պատրիարքարանից են ներկայացրել, Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը տակավին չի արձագանքել հունվարի 14-ին իրենց ներկայացրած դիմումին:

1998-ին էլ պատրիարքական ընտրությունները ամիսներով ձգձգվել են:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Գազավորված ըմպելիքները՝ վաղաժամ ծերության պատճառ

Բժիշկները եւ գիտնականներն անցյալում արդեն ասել են, որ գազավորված անալկոհոլ ըմպելիքներն արյան մեջ բարձրացնում են շաքարի մակարդակը, ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի վտանգ առաջացնում: Հիմա արդեն խոսքն այն մասին է, որ տվյալ ըմպելիքները վաղաժամ ծերության պատճառ են դառնում:

Մեղավորը կոլայում եւ գազավորված հյութերում պարունակվող ֆոսֆատն է, որը վառ արտահայտված համ է տալիս բազմաթիվ անալկոհոլ ըմպելիքների: Այդ հանքային միացությունը հաճախ ավելացնում են նաեւ մսամթերքին, կեքսին եւ հացին: Հարվարդի համալսարանի գիտնականները համոզված են, որ ֆոսֆատը «չորացնում» է մաշկն ու մկանները եւ կարող է վնասել սրտին ու երիկամներին:

«Դեյլի մեյլ» թերթը հաղորդում է, որ գիտնականներն իրենց պնդումը հաստատել են մկների երեք խմբերի վրա կատարած փորձերով: Առաջին խմբի մկները ծագումնաբանորեն ստեղծվել էին «կլոտո» գենով, որը հանգեցնում է ֆոսֆատի նախնական մակարդակի բարձրացմանը: Այդ մկներն ապրել են 8-15 շաբաթ՝ տառապելով վաղաժամ ծերության հետ կապված առողջական մի շարք բարդություններից:

Երկրորդ խմբի մկները չունեին «կլոտո» գեն, այսինքն՝ օրգանիզմում ֆոսֆատի մակարդակը նորմային մոտ էր: Նրանք ապրել են 20 շաբաթ: Երրորդ խումբը եւս չուներ հատուկ գեն, բայց սնունդը պարունակում էր ֆոսֆատի մեծ քանակություն: Նրանք բոլորն ապրել են 15 շաբաթ:

Գիտափորձը ցույց է տալիս, որ ֆոսֆատի մեծ քանակությունը առաջացնում է լուրջ թունավորումներ: Գիտնականների կարծիքով, շաբաթական ընդամենը երկու շիշ կոլա խմելը էապես մեծացնում է այնպիսի հիվանդությունների ծագման վտանգը, ինչպիսիք են ոսկրերի փխրունությունը, մկանային թուլությունը, որոնք վաղաժամ ծերության նախադրյալներ են:

# Ո՞վ է Ադրբեջանի «երկրորդ եղբայրը»

Երեկ երկօրյա այցով Ադրբեջան ժամանեց Իրանի ներքին գործերի նախարար **Մոստաֆա Նաջջարը**: Հենց օդանավակայանում նախարարը հայտարարել է, որ Իրանը Ադրբեջանի հետ սերտորեն կհամագործակցի բոլոր ոլորտներում: Նաջջարն ընդգծել է, որ երկու երկրների համագործակցությունը «հաջողությամբ զարգանում է». «Մենք ադրբեջանական կողմի հետ կքննարկենք անվտանգության եւ սահմանային խնդիրների, մաքսանենգության եւ անօրինական միգրացիային վերաբերող հարցեր», նշել է իրանցի նախարարը: Իրանական պատվիրակության կազմում են Գիլանի, Արեւելյան Ատրպատականի, Արեւմտյան Ատրպատականի եւ Արդեբիլի նահանգապետները, Իսլամական խորհրդի մեջլիսի անդամներ, ինչպես նաեւ պաշտոնյաներ՝ Իրանի ՆԳՆ-ից եւ ԱԳՆ-ից: Այս ամենը հասկանալի է այն առումով, որ Բաքուն տարբեր մակարդակներով բազմիցս է բարձրաձայնել, որ Իրանի վերոհիշյալ շրջանները «բնիկ ադրբեջանական են»: Իրանի հենց այս պատվիրակությունը, նախարար Նաջջարի խոսքերով, Ադրբեջանի հետ պետք է քննարկի նաեւ «սահմանային խնդիրներ»:

Հանդիպելով Մոստաֆա Նաջջարին՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը արդեն վստահություն է հայտնել, որ «երկու երկրների բարեկամական ու եղբայրական հարաբերությունների համար Նաջջարի այցը լուրջ խթան կլինի»:

Իրանի ՆԳ նախարարի այցին զուգահեռ՝ մայիսի 4-ին Իսրայել կմեկնի Ադրբեջանի արտաքին գործերի փոխնախարար Արազ Ազիմովը, որը հանդիպումներ կունենա Իսրայելի ԱԳ նախարարի տեղակալի եւ մի շարք դիվանագետների հետ: Նախատեսվում է նաեւ Ազիմովի հանդիպումը Իսրայելի ԱԳ նախարար Ավիգդոր Լիբերմանի հետ: Իսրայելի հետ նույնպես Բաքուն կքննարկի «երկկողմ բարեկամության հարցեր, տարածաշրջանային խնդիրներ» եւ այլն: Իսկ մայիսի 6-ին Իսրայելի Հադրա քաղաքը կհյուրընկալի մեծ պատվիրակություն «եղբայրական Ադրբեջանից». այդ օրը քաղաքում կբացվի Հեյդար Ալիեւի անվան պուրակ, իսկ ադրբեջանական պատվիրակությունը, որի մեջ կմտնեն 40 հոգի, կգլխավորի Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական բաժնի ղեկավար Ալի Հասանովը:

Տպավորությունն այնպիսին է, որ Բաքուն հայտարարել է «նոր եղբոր մրցույթ», ո՞վ ավելի շահեկան կլինի Թել-Ավի՞վը, թե՞ Թեհրանը, եւ ամենակարեւորը՝ ո՞ւմ ավելի շահեկան կլինի եղբայրություն անել Բաքվի հետ՝ Իսրայելի՞ն, թե՞ Իրանին, ցույց կտա ժամանակը:

Հ. ԱՖՅԱՆ

AZG NEW PDF.qxd 03/05/2010 22:34 Page 1



# Սերժ Սարգսյանը հանդիպել է Չինաստանի նախագահին

### *Նախագահն այցելել է նաեւ «Չինական Վենետիկ»*

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Չինաստան կատարած այցի շրջանակում մայիսի 2-ին հանդիպել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախագահ Հու Ջինթաոյի հետ:

Ինչպես տեղեկանում ենք նախագահի մամուլի ծառայությունից, նախագահը շնորհակալություն է հայտնել Հու Ջինթաոյին՝ «Շանհայ Էքսպո-2010»-ի բացման արարողությանը ներկա գտնվելու հրավերի համար, եւ շնորհավորել ցուցահանդեսի հաջող մեկնարկի առթիվ:




Նա ասել է, որ Չինաստանի հետ հարաբերությունների զարգացումը ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է, եւ նշել է, որ երկկողմ կապերն արդեն իսկ ընդլայնման լավ դինամիկա ունեն: Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը, հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային եւ կրթական բնագավառում աշխույժ համագործակցությունը, բազմակողմ ձեւաչափերում փոխադարձ աջակցությունը նպաստում են Հայաստանի եւ Չինաստանի միջեւ փոխըմբռնմանը եւ վստահության մեծացմանը:

Կողմերը գոհունակությամբ արձանագրել են, որ էներգետիկայի, քիմիական արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության եւ տեխնիկայի, պաշտպանության, մշակույթի եւ կրթության բնագավառներում բազմաթիվ համատեղ նախագծեր իրականացվել են մեծ հաջողությամբ: Սերժ Սարգսյանն ու Հու Ջինթաոն հայ-չինական համագործակցության մինչ այժմ կուտակած մեծ փորձը լավ հիմք են համարել՝ որակական նոր աստիճանի բարձրացնելու երկկողմ հարաբերությունները:

Նախագահները քննարկել են Հայաստան-Իրան երկաթուղու կառուցմանը Չինաստանի մասնակցության հարցերը: Կողմերն ընդգծել են, որ ՉԺՀ-ի Շանսի նահանգում հայ-չինական «Շանսի-Նաիրիս» համատեղ ձեռնարկության գործարկումը երկկողմ կապերի զարգացման կարեւոր վկայություն է:

Հայաստանի եւ Չինաստանի նախագահները վստահեցրել են, որ պատրաստ են լրացուցիչ ջանքեր ներդնել հայ-չինական բարեկամական հարաբերություններն ընդլայնելու գործում:

Իսկ մայիսի 1-ին Հայաստանի նախագահն այցելել է Սուժոու քաղաք եւ համանուն տեխնոպարկ, որը Չինաստանի եւ Սինգապուրի համատեղ նախագիծն է: Սուժոուն հաճախ անվանում են «Չինական Վենետիկ», արդյունաբերական արտադրանքի եւ պատրաստի արտադրանքի արտահանման ծավալներով այն զիջում է միայն Շանհային: Քաղաքում նախագահ Սարգսյանը այցելել է «Հայգեր» ավտոբուսների գործարան« որտեղ հանդիպել է Սուժոուի փոխքաղաքապետ Ժառ Վեյչանի եւ «Հայգեր» կորպորացիայի գլխավոր տնօրեն Վու Վենմենի հետ: «Հայգեր» գործարանը միայն Սուժոու քաղաքում ունի 4000 աշխատատեղեր եւ անցյալ տարի ունեցել է 730 մլն ԱՄՆ դոլարի շրջանառություն: Հայկական պատվիրակության հետ զրույցում Վու Վենմենը նշել է, որ իրենք մտադիր են նման ցուցանիշների հասնել նաեւ հայկական շուկայում: «Հայգերի» տնօրենի խոսքերով, իրենք ուսումնասիրել են հայկական շուկան եւ վստահ են, որ «համագործակցության նոր հորիզոններ են բացվում»: Իր հերթին քաղաքային իշխանությունները հայկական կողմին վստահեցրել են, որ Սուժոուն շահագրգռված է Հայաստանի հետ զարգացնելու համագործակցությունը ոչ միայն տնտեսական, այլեւ կրթության եւ մշակույթի ոլորտներում:

Հայաստանի նախագահը եղել է նաեւ Սուժոուի գիտությունների, մշակույթի եւ արվեստի կենտրոնում, ծանոթացել է տարածքում կազմակերպված թանգարանի ցուցանմուշներին: Սուժոուի քաղաքապետ Յան Լիի հետ հանդիպման ընթացքում Սերժ Սարգսյանը նշել է, որ քաղաքում տեսավ Չինաստանի նոր հնարավորությունները. «Ես ինձ զգում էի ապագայի քաղաքում», ասել է Հայաստանի նախագահը՝ հավելելով, որ Հայաստանի եւ Չինաստանի քաղաքական հարաբերությունները դրական են, եւ անհրաժեշտություն կա, որ տնտեսական հարբերությունների զարգացման տեմպերը չզիջեն քաղաքականին:

Հ. Ա.

**ԹՈՒՆԱՎՈՐ ՏԱՐԱԾՔ**

# Ոչ ոք ուշադրություն չի՞ դարձնում Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցին

«**Ազգը**» նախորդ համարում տեղեկացրել էր, որ Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցը գտնվում է կառավարության, անձամբ՝ վարչապետի տեսադաշտում: Մենք մեջբերել էինք արտակարգ իրավիճակների նախարարության հասարակայնության բաժնի պետ **Նիկոլայ Գրիգորյանի** խոսքերը, որը նշել էր, որ գերեզմանոցի վերացման համար կառավարությունն արդեն բնապահպանության նախարարությանն




է փոխանցել շուրջ 20-30 մլն դոլար, իսկ վարչապետն էլ նամակներով դիմել է համապատասխան միջազգային մարմիններին՝ ակնկալելով նրանց օգնությունը:

Սակայն երեկ հրավիրած ասուլիսում հետաքննող լրագրող **Էդիկ Բաղդասարյանը** եւ ակտիվ բնապահպան **Մարիամ Սուխուդյանը**, որոնք նախօրեին եղել էին գերեզմանոցի տարածքում, նշեցին հետեւյալը. «77 տոննա թունաքիմիկատներն արդեն ներծծվել են այդ տարածքից 35 մետր ներքեւ գտնվող հողի, ջրի եւ օդի մեջ: Սա ամենամեծ հանցագործությունն է, որ կատարվել է վերջին տասնամյակներում Հայաստանում: Երեւանում տեղի է ունենում աղետ, եւ ոչ ոք չի ուզում ուշադրություն դարձնել կամ աչքի տակով անցկացնել: Արտակարգ իրավիճակների եւ բնապահպանության նախարարությունները որեւէ քայլ չեն ձեռնարկում այս ուղղությամբ, եւ եթե այսպես շարունակվի, մենք պահանջելու ենք բնապահպանության նախարարի հրաժարականը, իսկ արտակարգ իրավիճակների նախարարությանը կստիպենք հարեւան գյուղերի բնակիչներին զգուշացնել վտանգի մասին»:

«Անձամբ ես ցավեր եմ զգացել այդ տարածքում,- ասաց Սուխուդյանը,- 20 րոպե անցկացրինք այդտեղ, վերցրել էինք բժշկական դիմակներ, բայց այդ թունաքիմիկատները պարկերից դուրս էին եկել, այնինչ նախկինում՝ պարկերում էին: Նախ կոկորդս սկսեց ցավել, սկսեցի հազալ, կրծքավանդակումս ցավեր սկսեցին, սրտխառնոց, գլխացավ ունեցա»: Էդիկ Բաղդասարյանը ավելացրեց, որ թունաքիմիկատները վտանգավոր են հատկապես հարակից գյուղերի բնակիչների համար. «Նրանք կարող են ստանալ քաղցկեղ եւ այլ վտանգավոր հիվանդություններ: Ես գիտեմ, որ 2005-ին Հայաստանին 500 հազար դոլար են տրամադրել, կազմվել է ազգային ծրագիր գերեզմանոցը ոչնչացնելու համար, սակայն այդ գումարով նույնիսկ թունաքիմիկատները չեն ուսումնասիրվել», եզրափակեց Բաղդասարյանը:

Հ. Ա.

т$^2$м$^2$ОтафВЪафЬ

«Ազգի» խմբագրությունը ցավակցում է իր աշխատակից Մարիետա Մակարյանին՝ քրոջ ամուսնու՝

**Գրիշա Տեր-Անանյանի**

վաղաժամ մահվան կապակցությամբ:

Հուղարկավորությունը տեղի կունենա այսօր, մայիսի 4-ին, ժամը 14:00-ին, Իսահակյան 38, բն. 37 հասցեից:

# «Հրանտ Դինքը բռնության գազանային ակտի զոհ է»

*1-ին էջից*

**Առհասարակ, խոսելով եվրոպական ԶԼՄ-ների մասին, Համմարբերգը նշել է, որ վերջիններիս պատկերը փոփոխվում է աննախադեպ արագությամբ. «Սեփականության կենտրոնացումը, շատ թերթերի փակումը, խմբագրությունների կրճատումն ու վերափոխումը համընկնում են ինտերնետում չճշտված տեղեկատվության չափից դուրս աճի հետ: ԶԼՄ-ները դառնում են ավելի արագ, բայց առաջարկում են ավելի մակերեսային լուսաբանում: Լրագրության ճգնաժամը սպառնում է խնդիր դառնալ Եվրոպայում ժողովրդավարության համար», ընդգծել է հանձնակատարը՝ հավելելով, որ ԶԼՄ-ների նոր համապատկերում լրագրող-վերլուծաբանը, որը որակյալ տեղեկատվություն է առաջարկում, կարող է հայտնվել «մեռնող տիպերի» շարքում:**

**Իսկ այս պատճառով, ըստ մարդու իրավունքների հանձնակատարի, կառավարությունները պետք է ցույց տան, որ պատրաստ են պաշտպանել ԶԼՄ-ներին. «Նրանք դա պետք է անեն ոչ թե խոսքերով, այլ գործով: Որեւէ ջանք չպետք է տնտեսվի՝ ձերբակալելու եւ դատելու ոչ միայն փաստացի կատարողներին, այլեւ նրանց պատվիրատուներին», նշել է Համմարբերգը:**

Հ. Ա.

# Գերմանական KfW բանկը 18 մլն եվրո տրամադրեց վերականգնվող էներգետիկային

*1-ին էջից*

**Ռոլանդ Ջիլլերն իր հերթին նշեց, որ «Վերականգնվող էներգիայի աջակցություն» ծրագրի վարկը տրամադրվում է ցածր տոկոսով եւ երկարաժամկետ, դրանով իսկ նպաստելով վերականգնվող էներգետիկայի զարգացմանը Հայաստանում: Նա նաեւ տեղեկացրեց, որ 2010 առանձնահատուկ է հայ-գերմանական համագործակցության համար, քանի որ Գերմանիայի կառավարությունը մտադիր է աննախադեպ ծավալների ծրագրեր ֆինանսավորել: Մասնավորապես, նախատեսվում է Հայաստանի կառավարության հետ կնքել 120 մլն եվրոյի պայմանագրեր: Գերմանիայի կառավարության այդ ցանկությունը Ռոլանդ Ջիլլերը պայմանավորեց նրանով, որ Հայաստանը շատ է տուժել ճգնաժամից: Միաժամանակ նա նշեց, որ Հայաստանի կառավարությունը շատ հստակ քայլեր է կատարել այդ ուղղությամբ, ինչն առանձնացվել է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից:**

**«Որո՞նք են ֆինանսավորման ենթակա ծրագրերը» հարցին պատասխանելով՝ Ռոլանդ Ջելլերն ասաց, որ 20 մլն եվրոյի համաձայնագիրը հիպոթեկային վարկավորման համար արդեն ստորագրվել է, 18 մլն եվրոն ստորագրվեց երեկ՝ վերականգնվող էներգետիկայի համար: Առաջիկայում 30 մլն եվրո կհատկացվի Գյումրիում եւ Վանաձորում ջրամատակարարման ծրագրի 2-րդ փուլի իրականացման համար: Եվս 51 մլն եվրո էլ գերմանական կողմը կտրամադրի Որոտանի կասկադի եւ հիդրոկայանների վերականգնման համար:**

# ԼՂՀ-ն Իրանից գյուղտեխնիկա է գնում

Ինչպես հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Արաքում գտնվող Իրանի կոմբայնաշինական ընկերությունից 20 կոմբայն է ձեռք բերել: Այդ մասին անցած շաբաթ Իրան կատարած այցի ժամանակ հայտարարել է Ղարաբաղի գյուղատնտեսության նախարար **Արմո Ծատրյանը**, որը ապրիլի 27-29 գտնվում էր Իրանում:

Արաք քաղաքում լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ղարաբաղի գյուղատնտեսության նախարարը հայտնել է կոմբայնաշինական ընկերության հետ ստորագրած պայմանագրի մասին՝ գնելու համար արդիական 20 կոմբայններ, որոնցից արդեն 10 ստացել են, իսկ մնացած 10 կստանան շուտով: Գործարքի ընդհանուր արժեքը 1 միլիոն դոլար է:

Հ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 03/05/2010 22:04 Page 1



# Իմ երազանքն էր դառնալ լրագրող, եւ դարձա...

## Հարցազրույց Արմեն Դուլյանի հետ

Մամուլի ազատության միջազգային օրվա առիթով «**Ազգը**» հյուրընկալել էր շուրջ 3,5 տասնամյակ լրատվության բնագավառում աշխատող, անվանի լրագրող **Արմեն Դուլյանին**: Նրա ձայնի տեմբրը, կիսահումորային, երբեմն հեգնական շեշտերը, կարեւորագույն հաղորդումներն ու հաղորդաշարերը միշտ սպասելի են եւ՛ ռադիոլսողներին, եւ՛ հեռուստադիտողներին: «Ազգի» խմբագրությունում կայացած ջերմ զրույցի ընթացքում Արմեն Դուլյանը հետաքրքրական փաստեր ու դեպքեր էր պատմում Երեւանում եւ Պրահայում «Ազատություն» ռադիոկայանում աշխատելու տարիներից: Արմենն այն լրագրողն է, որը երբեւիցե չի դավաճանել իր սկզբունքներին, չի գոհացրել իր ղեկավարների պահանջները, եթե դրանք չեն համընկել իր տեսակետներին, հրաժարվել է գրել եւ անգամ` աշխատել: Իսկ թե ինչպե՞ս եւ ե՞րբ սկսեց լրագրությամբ հետաքրքրվել, Արմեն Դուլյանն առանց երկմտելու ասաց. «Երազում էի դառնալ լրագրող եւ դարձա: Իսկ այդ ամենն սկսվեց, երբ դպրոցում մեզ հանձնարարեցին գրել շարադրություն «Ի՞նչ եմ ուզում դառնալ» թեմայով: Ես հենց այդպես էլ գրեցի` ես ուզում եմ լրագրող դառնալ եւ գնալ արտասահման, նստել Եվրոպայի կենտրոնում, մի գեղեցիկ քաղաքի սրճարանում, սուրճ խմելիս գրել ինչ-որ հոդված: Այն, ինչ ես գրել էի, հարյուր տոկոսով կատարվեց ու հիմա կարող եմ հստակ ասել, որ իմ երազանքն իրականացավ տարիներ անց: Ես գնացի Եվրոպա, ու Պրահայում, «Սլավիա» սրճարանում (ի դեպ, այդ սրճարանը մեր «Առագաստ» (այն ժամանակ` «Պապլավոկ») սրճարանի պես միշտ եղել է հավաքատեղի անվանի մարդկանց, մտավորականների, պետական գործիչների համար: Այո, այդ սրճարանում էին հավաքվում նաեւ Վացլավ Հավելն ու իր թիմակիցները, ծրագրում ու մշակում «թավշյա» հեղափոխությունը ) նստած, սրճելով, ես գրեցի մեր «Պապլավոկի» մասին մի ակնարկ: Այսինքն, կատարվեց իմ դպրոցական երազանքը 24 տարի անց»:



Մեկ ամիս անց Արմենին հրավիրում են Պրահա` մշտական աշխատանքի, սակայն սկզբից նա չեմնուչում է անում: «Ես Հայաստանում վազվզող ժուռնալիստ էի, սրանից-նրանից հարցազրույցներ էի պոկում, թուքումուր ստանում, հաճախ էլ, թե «դու ո՞վ ես, սուտ եք բոլորդ գրում» խոսքերին արժանանում եւ այլն. չգիտեի եւ չէի պատկերացնում, թե Պրահայում համակարգչի առաջ նստած ի՞նչ պիտի անեի: Ի վերջո, գնացի ու 10 տարի լռվեցի «Ազատություն» ռադիոկայանում»:

«**Ազգի**» այն հարցին, թե մեզանում մոդային տուրք տալով, գրեթե բոլոր պետական ու մասնավոր բուհերում կան միջազգային լրագրության ֆակուլտետներ, բաժիններ, դուք արտերկրում բազմամյա աշխատանքային փորձ ունեք, ո՞վ է միջազգային լրագրողը, կամ ի՞նչ է միջազգային լրատվությունը եւ մեզանում դա զարգացա՞ծ է, Դուլյանը պատասխանեց. «Ինձ համար շատ զարմանալի է միջազգային լրագրող ասվածը: Դա պարզապես այդպես կոչվում է: Չգիտեմ: Մի անգամ «Ռոյթեր» գործակալությունը ինձ հրավիրեց Լոնդոն մեկամսյա կուրսերի եւ հրավերում գրված էր, որ դուք գնում եք սովորելու միջազգային լուրեր: Այդ միջազգային լուրերը պարզապես հասարակ լուրեր էին, որոնք զատվում էին տնտեսական, սոցիալական եւ այլ ոլորտներից ու պարզապես քաղաքական բնույթի էին: Մինչդեռ մեզ մոտ միջազգային ասվածը դրսում ոչ մի տեղ չեն սիրում, որովհետեւ այդ բնույթի ամենակարեւոր լուրն անգամ դրսում հետաքրքրական չէ ու մարդիկ չեն հետաքրքրվում դրանով: Զարգացած երկրներում մարդիկ թքած ունեն միջազգային լրատվության վրա: (Անշուշտ, ասածս չի վերաբերում, ասենք, սեպտեմբերի 11-ի նման դեպքերին. արտասահմանում միջազգային ասվածը մի քիչ հարաբերական է եւ ընկալվում է որպես պարզապես քաղաքական»:

Արմեն Դուլյանը ցավով նշեց, որ մեզանում գլխավոր լրատվամիջոցներում` լինի դա թերթ, թե հեռուստատեսություն, թե կայքէջ, պարզապես ներկայացնում են այն, ինչ վերցնում են օտար կայքերից առանց վերլուծության, համեմատության եւ թարգմանությամբ ներկայացնում: «Պարզապես ինձ էլ է զարմացնում, թե այդքան շատ լրագրողներ ունենալը մեր ինչին է պետք, բայց մյուս կողմից ես միշտ ասել եմ, որ լրագրությունը Հայաստանում դա մեր ժողովրդական տնտեսության գործող ճյուղերից մեկն է, ու միշտ էլ աշխատատեղ կլինի, քանի որ մի քանի տասնյակի են հասնում հեռուստաընկերությունները, թերթերը, էլեկտրոնային թերթերը»: Արմեն Դուլյանը, անդրադառնալով Հայաստանի լրատվության վիճակին, ասաց. «Ինձ թվում էր, որ այս հասարակությունը, մարդիկ, ճշմարտությունը չեն ուզում, նրանք ուզում են ինչ-որ մի բան, ասենք, մի թերթ են առնում, որտեղ հայհոյում են Սերժ Սարգսյանին: Ինքն էլ է այդ կարծիքին, որ վիճակը լավ չի, աշխատանք չունի եւ այլն: Այդպիսիները նման թերթերը հատուկ են առնում ու դրանցից հաճույք են ստանում. Նրանց ոչ թե ճշմարտությունն է պետք, այլ որ այդ թերթը կարդալով բավարարում են իրենց դառնացածությունը, եւ հակառակը` ինչ-որ մեկը երբ Լեւոն Տեր-Պետրոսյանին քննադատում է, սկսում է հիշել մութ ու ցուրտ տարիները եւ այլն, ու դրանք էլ այդպես են բավարարվում: Եվ այդպես բոլոր լրատվամիջոցները ոչ միայն հասարակությանն են բավարարում, այլեւ որոշ խավերի, իշխանավորների, որոնք էլ թելադրում են, թե օրվա լուրերի գլխավոր լուրը ո՛րը պետք է լինի ու հաշվի չեն առնում, թե հասարակությանը այդ լուրը հետաքրքրո՞ւմ է, թե՞ ոչ: Ասենք, օրինակ, մեր երկրի նախագահին չգիտեմ որ երկրի դեսպանն իր երկրի հավատարմագիրը հանձնեց: Պարզապես, ժողովրդի լեզվով ասած, «մեզ էշի տեղ են դնում»: Եվ այսպես, ստեղծվում է ոչ ճիշտ հասարակական կարծիք: Ես հասկանում եմ, որ թելադրանքը վերեւից է գալիս, ոմանք ենթարկվում են, ոմանք` ոչ»:

Ո՞րն է ելքն այդ իրավիճակից: «Կա՛մ ընկնում ես այդ ջրերը, համակերպվում ես այդ իրավիճակին, կա՛մ քո սկզբունքներով պիտի առաջնորդվես: Ես դա ասում եմ այն լրագրողներին, որոնց տարբեր առիթներով հանդիպում եմ. ունեցեք սկզբունքներ` սուտ չասել, մարդկային արժանապատվությունը չվիրավորել, ազգամիջյան թշնամանք չհրահրել, պատվերով նյութ չանել եւ այլն: Եթե պահպանում ես այդ սկզբունքները` խիղճդ մաքուր է ու դու կարող ես ընդդիմանալ, անգամ գուցե կորցնես աշխատանքդ, ինչպես եղավ իմ պարագայում սովետական տարիներին «Արմենպրեսում» աշխատելիս: Արդյունքում ես կորցրեցի լավագույն 10 տարիներս եւ մի տող չգրեցի: Նման մի դեպք էլ եղավ Լեւոն Տեր-Պետրոսյանի ժամանակ, երբ դաշնակցության գործունեությունը արգելվեց, հետո նաեւ չորս տարի «Ազատություն» ռադիոկայանի հեռարձակումը կասեցվեց»:

Չնայած այդ ամենին, Արմեն Դուլյանը շարունակում էր իր նոր նախագծերի ու ծրագրերի իրականացումը, նա հումորային հատուկ բաժին ուներ «Առավոտ» օրաթերթում, «Ազատություն» ռադիոկայանում: «Կիրակի» հումորային ծրագիրը փակվեց Հայաստանից ուղարկված բողոքի հիման վրա, մինչդեռ Արմեն Դուլյանը ցանկանում էր թերությունները, վատ բաները, ընտրախախտումները ծիծաղով, հումորով ու գրոտեսկով ներկայացնել, սակայն դա չընդունվեց: «Եթե ուզում ենք լավ ապրել, ապա պետք է օգտվել արդեն գործող այն երկրների փորձից, որ 200 տարի արդեն այդ ճանապարհն անցել են, այլ ոչ թե ասենք, թե գտնվում ենք անցումային շրջանում: Ցավոք, այդ անցումային շրջանը շատ է երկարում»:

Տպագիր մամուլի մասին ի՞նչ կարծիք ունի Արմեն Դուլյանը: «Ինձ թվում է, որ մամուլը երկու մասի են բաժանվել, մեկն ասում է շատ վատ է, մյուսը` շատ լավ է: Չեմ հասկանում, ինչո՞ւ չի կարելի ասել եւ վատը, եւ լավը: Վատ է նաեւ, որ սկսել են իրար դեմ գրել: Իմ թված սկզբունքների շարքում է նաեւ իրար դեմ չգրելը: Լավ չէ մեր մամուլի վիճակը, եթե լավ լիներ, ապա օրեր առաջ «Ֆրիդըմ հաուզը» հերթական անգամ իր զեկույցում Հայաստանին ոչ ազատ լրատվություն ունեցող երկրների շարքին չէր դասի: Դա սկսվեց դեռ 2002 թվականից, երբ փակեցին «A1+»-ը, եւ դա առիթ հանդիսացավ, որ մեզ դասեն Ադրբեջանի, Կամերունի եւ նման այլ երկրների շարքում: Իսկ ինչո՞ւ: Որպեսզի մի հեռուստատեսություն անգամ ճիշտը չներկայացնի: Ու խաղացին երկրի հեղինակության հետ... Լավ չի, իհարկե, լավ չի մեր մամուլի վիճակը, եթե լավը լիներ, միգուցե հենց մամուլից սկսվեր: Ես միշտ ասել եմ, որ եթե մենք ուզում ենք 1-ին, 2-րդ, 3-րդ իշխանություններն առողջացնել, եկեք մեզանից սկսենք եւ ինչ-որ բաներ անելով մի գուցե 4-րդ իշխանությունն էլ լավանա, ու հետո էլ մյուսները: Բայց մենք դա չենք անում տարբեր պատճառներով եւ այդ պատճառները հայտնի են եւ՛ ղեկավարներին, եւ՛ լրագրողներին: Ուստի արդյունքում ունենք այն, ինչ ունենք: Դրա համար ես չեմ հավատում թերթերում հրապարակված այնպիսի լուրերին, որ իբր իշխանություններին մոտ կանգնած աղբյուրներից թերթի առաջին էջին տալիս են լուր, ու հենց այդ օրվա համարի վերջին էջում նույն լուրն այլ կերպ են ներկայացնում: Բա էդ թերթը խմբագիր չունի՞, չեմ հասկանում, ու դրա համար չեմ հավատում 50-50 գրվող հոդվածներին եւ նման թերթերին:

Մամուլի ազատության օրվա առթիվ շնորհավորում ենք բոլոր լրագրողներին ու լրատվամիջոցներին եւ մաղթում` հավատարիմ մնացեք ձեր սկզբունքներին, եթե ... ունեք:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՏԻՐԱՍՊՈԼ

# «Այստեղ յուրաքանչյուրին կարող են ստիպել ընդունել ուզածդ մեղադրանք»

## Հայ լրագրողը` «լրտեսության» մեղադրանքի ներքո

**«Հանուն բոլոր սրբությունների, օգնեցե՛ք իմ կնոջն ու երեխաներին: Ինձ պարտադրում են խոստովանել, թե լրտեսել եմ Մոլդովայի օգտին ու դավաճանել հայրենիքիս: Շրջահայաց ձեւով ծեծում են, սպառնում հետքեր չթողնելով ավելի դաժան խոշտանգումների ենթարկել: Սպառնում են մեղադրել ու ձերբակալել նաեւ կնոջս` արատավորելով նրան: Սպառնում են ֆիզիկական հաշվեհարդար տեսնել կնոջս ու երեխաներիս հետ», այսպիսի հայտարարություն է տարածվել Մերձդնեստրում արդեն մոտ մեկ ամիս անազատության մեջ գտնվող հայազգի լրագրող Էռնեստ Վարդանյանի անունից:**

**Ըստ մոլդովական լրագրողական կազմակերպությունների, Վարդանյանն ահազանգել է իր նկատմամբ ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումների մասին: «Ես լրտես չեմ եւ ոչ մեկին չեմ դավաճանել, ասել եմ միայն ճշմարտությունը` հանուն մարդկանց կյանքի բարելավման», ասված է Վարդանյանի հայտարարության մեջ, հավելմամբ, հարցաքննություններում հենց իր գործունեությունն էլ ներկայացվում է որպես մեղադրանք, իբր ավել-պակաս է խոսել լրագրողը:**

**Ներկայացնելով, որ հարցաքննությունները տեսաձայնագրվում են ընտրովի ու դրվագային, Վարդանյանն իր հայտարարությամբ կոչ է անում չհավատալ ու չվստահել իշխանությունների ու քննչական մարմինների կողմից իրեն վերագրվող լրտեսության եւ դավաճանության պնդումներին: «Այստեղ յուրաքանչյուրին կարող են ստիպել ընդունել ուզածդ մեղադրանք: Ինձ ստիպում են վարկաբեկել եւ ցուցմունքներ տալ իշխանություններին քննադատող այլ անձանց դեմ»:**

**Էռնեստ Վարդանյանը օգնություն է հայցում լավ փաստաբան ունենալու հարցում, «անգամ եթե ես տեսաձայնագրություններում ու դատարանում հրապարակավ ինձ մեղավոր ճանաչեմ»: «Հանուն ընտանիքիս անվտանգության պատրաստ եմ ինքս ինձ զրպարտել ու ազատազրկման մեջ մնալ այնքան, որքան պետք կլինի իշխանություններին», ասված է հայտարարությունում, որը Վարդանյանը բանավոր փոխանցել է ազատազրկման վայրի անվտանգության աշխատակիցներից մեկին, որն էլ, իր հերթին, բառացի փոխանցել է LiveJournal կայքին:**

**«Ազգը» նախապես ներկայացրել է, որ ծնունդով գյումրեցի, 33-ամյա Էռնեստ Վարդանյանը անազատության մեջ է ապրիլի 7-ից: Մերձդնեստրի իշխանությունները նրան մեղադրում են լրտեսության ու հայրենիքի դավաճանության մեջ: Առաջադրված մեղադրանքով Վարդանյանը կարող է դատապարտվել 12-20 տարվա ազատազրկման:**

**Վարդանյանի ձերբակալությունը դատապարտել են միջազգային տարբեր լրագրողական ու իրավապաշտպան կազմակերպություններ եւ Մերձդնեստրի իշխանություններից պահանջել ազատ արձակել լրագրողին: Հայ լրագրողի հարազատներն աջակցություն են խնդրել նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանից, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանից: Իսկ մինչ այդ Էռնեստ Վարդանյանի փաստաբան Ալեքսանդր Պոստիկեն դիմել է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող եվրոպական կառույցներին:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Խոսքի ազատություն» հասկացությունը դեռ Հայաստան չի ժամանել

**Թեպետ օրը տոնական էր, սակայն «Հենարան» ակումբում հավաքված լրագրության ոլորտի մասնագետներն ու խմբագիրները խոսում էին միայն մամուլի խնդիրներից: ՄԱԿ-ի այս տարվա հրապարակած զեկույցի համաձայն` աշխարհում մասնագիտական պարտքը կատարելիս սպանվել է 70 լրագրող: Սա հերթական անգամ փաստում է, որ լրագրությունն աշխարհի ամենավտանգավոր մասնագիտություններից է:**

**Որ Հայաստանում լրագրողների սպանության դեպքեր չեն արձանագրվել, չի նշանակում, որ խնդիրներ չկան: Տարվա ընթացքում եղել են բռնության, լրագրողի աշխատանքին խոչընդոտելու բազմաթիվ դեպքեր: Թե ինչպես լուծել խնդիրը, որ խոսքի ազատության օրը նշենք ազատ մամուլ ունեցող երկրում, մասնագետները տարբեր դեղատոմսեր են առաջարկում:**

**Իրավունքի ազատության կենտրոնի տնօրեն Շուշան Դոյդոյանը վստահ է, որ լրագրողների հանդեպ բռնարարքները գուցե վերանան, եթե բարձրանա իրավական գիտակցությունը: «Արդյունավետ կլինի, եթե հարցերը քննարկեն դատարանում: Երբ որեւէ օլիգարխ, պաշտոնյա կամ նրա թիկնազորի անդամը ծեծում է լրագրողին` դա ելք չէ: Իսկ դատարանում նրանք հավասար հնարավորություններ ունեն», ասում է նա:**

**«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը նկատում է, որ միայն դատարան դիմելը բավարար չէ: «Հունվարի 10-ին տեղի ունեցած ընտրությունների ժամանակ լրագրողների նկատմամբ բռնությունների վերաբերյալ բարձրաձայնեցին, սակայն ապարդյուն: Երբ «Ա1+»-ը զրկվեց եթերից, լրագրողները պայքարեցին, քանի՞ անգամ դիմեցին դատարան, բայց.. Միայն դատական գործընթացով հարցը չի լուծվի»: Աբրահամյանի կարծիքով` խնդիրը մթնոլորտն է, լրագրողների համերաշխության բացակայությունը: «Եթե 15 հեռուստաընկերություն նկարեր, թե ինչպես են լցոնումներ կատարում, դժվար կլիներ նրանց աշխատանքին խոչընդոտել»:**

**Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը համոզված է. լրագրողների նկատմամբ բռնությունները չեն դադարի, քանի դեռ քաղաքացին պաշտպանված չէ: Խնդիրը վերլուծելով բարոյական հարթությունից` նա հավելում է, որ առաջխաղացման լավագույն ճանապարհներից մեկը լրագրողի արժանապատվությունն է, որ չպետք է կորցնել: «Երբ 11 հեռուստաընկերություն առանց կարդալու խարտիա են ստորագրում, նշանակում է` արժանապատվություն չունեն: Մինչեւ չհարգենք մեր մասնագիտությունը, ոչինչ չի փոխվի», ասաց Նավասարդյանը:**

**«Եթե անգամ «Ա1+»-ը հեռարձակման իրավունք ստանա, խնդիրները չեն լուծվի, եւ վիճակում փոփոխություն չի լինի: Խնդիրները կմնան, որովհետեւ մեկ հեռուստաալիքի բացմամբ լրատվական դաշտի խնդիրները չեն լուծվի», նկատեց «Առավոտ» թերթի խմբագիրը:**

Հ. Հ.

AZG NEW PDF.qxd 03/05/2010 22:04 Page 1



# Ապաստան

***Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական գործընթացների, պետական-պաշտոնեական ուղեգծի խորշակն առաջին հերթին հարվածում է հասարակական երեւույթներին, որոնք, որպես կանոն, զրկվում են զարգացման հեռանկարից, քանի որ դրանց առջեւ գոցվում են հնարավորությունների դռները: Հետխորհրդային Հայաստանի պատմական այս ընթացքում հասարակական երկու կարեւոր եւ առանձնահատուկ երեւույթներ հայտնվել են ներհայաստանյան խորշակին (թեպետ ինչո՞ւ միայն ներհայաստանյան) դեմ հանդիման՝ իրենց վրա ուղղակիորեն կրելով այդ խորշակի ավերիչ ուժգնությունն ու տեւականությունը: Դրանցից մեկը կրթությունն է, մյուսը՝ զանգվածային լրատվամիջոցները: Եթե կրթության ոլորտի եւ հեռարձակող ԶԼՄ-ների դեպքում ամեն ինչ պարզորոշ է եւ հստակ՝ ծավալուն եւ խորքային ավերածություններ, ապա տպագիր մամուլը, տեւական ժամանակահատված դիմագրավելով այդ խորշակին, աստիճանաբար դառնում է ուժահատ՝ ի զորու լինելով մղել բացառապես գոյատեւման պայքար՝ դրանով իսկ զրկվելով զարգացման հեռանկարից: Այս հանգամանքի վտանգներն ու տագնապներն ավելի քան իրական են. տպագիր մամուլի զարգացման հեռանկարի բացակայությունը նշանակում է հանրային կողմնորոշիչների կորուստ եւ հասարակության զարգացման անհեռանկարայնություն:***

Ի տարբերություն հասարակական կյանքի մի շարք ոլորտների, մասնավորապես՝ կրթության ոլորտի, ուր արդյունավետ եւ տեւական ժամանակ գործում էին խորհրդային ժամանակների կրթական ավանդույթներն ու մեխանիզմները (դրանք հետո անգթաբար ոչնչացվեցին), նորանկախ Հայաստանի մամուլը ձեւավորվեց անապատում, քանի որ խորհրդահայ մամուլը փլուզվել էր այդ համակարգի հետ: Նոր ժամանակների հեւքը, ազատության քամիների թարմությունը, փոփոխությունների ծավալներն ու ընդգրկումը, հասարակական ձգտումների ուղղությունը, քաղաքական խնդիրների բարդությունը եւ նպատակների ազնվությունը ստեղծել էին այն պարարտ հողը, որի վրա աճեց հետխորհրդային մամուլի կենարար ծառը: Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում նորօրյա մամուլի ձեւավորումն ու կայացումն ավելի արագ եւ արդյունավետ իրականացան, քան մինչեւ անգամ պետական հաստատությունների ձեւավորման եւ կայացման գործընթացը: Այս հանգամանքն ազդակ հանդիսացավ նաեւ հասարակության ձեւավորման համար: Թեպետ 20-րդ դարի 90-ական թթ. հայաստանյան մամուլը բնավ միատարր չէր, սակայն այդ ժամանակների լրագրությունն ուներ մի շարք առանձնահատկություններ՝ կտրուկ, համարձակ, չհղկված: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ տպագիր մամուլի որոշ մերժելի հատկություններ ձեւավորվեցին հենց այդ շրջանում, հատկություններ, որոնցից մամուլն այդպես էլ չկարողացավ ձերբազատվել: 90-ական թթ. հայաստանյան մամուլն ուներ այն ամենը, ինչը կենսանյութ է հաղորդում մամուլին՝ ազատություն, ընթերցողներ եւ ֆինանսներ: Այս երեք կարեւոր պայմանները եւ իրողությունները հնարավոր դարձրին ազատ եւ ընդդիմադիր մամուլի կայացումը Հայաստանում՝ նպաստելով թերթերի տպաքանակի աճին, լրագրության նոր՝ հետխորհրդային սերնդի կայացմանը, տպագիր խոսքի հանդեպ հարգանքի ձեւավորմանը:

Անցումային երկարատեւ փուլում գտնվող Հայաստանի Հանրապետության համար տպագիր մամուլի կայացումն ու զարգացումը կարող էին դառնալ հանրային օրգանիզմի այն առողջ եւ երիտասարդ սիրտը, որն արյուն էր արտամղելու դեպի հասարակական կյանքի այլ ոլորտներ: Սակայն նորանկախ Հայաստանի մամուլը դարձավ տարաբնույթ գաղափարական հոսանքների եւ քաղաքական ուժերի բախման անդրադարձման թեժ կետ՝ դրանով իսկ աստիճանաբար նեղացնելով մասնագիտական բարձր որակների ձեւավորման հնարավորությունները: Թեպետ այս հանգամանքը միանգամայն օրինաչափ էր եւ հատկանշական հեղափոխական եւ հետհեղափոխական մամուլի համար, սակայն մամուլը պետք է կարողանար աստիճանաբար ձերբազատվել այդ վարքագծից: Դրանից ձերբազատվելու դժվարությունները մեծացան, երբ նոր ձեւավորվող եւ կայացող հեռուստաընկերությունները վերածվեցին պետական մակարդակով իրականացվող վերահսկողության կառավարելի կենտրոնների: Պետական քարոզչության միագիծ եւ կարծր ուղղորդումը հեռուստաեթերից դուրս մղեց թե՛ քաղաքական ընդդիմությանը եւ թե՛ խոսքի, արտահայտման, բազմակարծության ազատությունը: Նրանց բոլորին մնաց բացառապես տպագիր մամուլի դաշտը, որը թե՛ ազատ էր, թե՛ ընդդիմադիր, թե՛ բազմակարծիք: Տպագիր մամուլը դարձավ վերահսկվող հեռուստաընկերությունների, գրաքննվող տեղեկատվության եւ ուղղորդվող հասարակական կարծիքի միակ իրական այլընտրանքը: Միաժամանակ, հեռուստաեթերի կոշտ վերահսկումը, հասարակական-քաղաքական գործընթացների բեւեռվածությունը երկփեղկեց նաեւ տպագիր մամուլի դաշտը՝ այն բաժանելով երկու հիմնական մասի՝ գործող իշխանության քաղաքական ուղեգիծը պաշտպանողների եւ այն մերժողների:

Խիստ փոքրաթիվ թերթերն էին, որ մնացին այդ երկու դաշտերից դուրս, որոնց տպաքանակները օրինաչափորեն անկում էին ապրում, քանի որ բեւեռացված էր նաեւ հասարակությունը: Վերահսկվող հեռուստաեթերը դարձավ այն քարը, որի վրա գայթեց ոչ միայն հեռուստաընկերությունների, այլեւ տպագիր մամուլի զարգացման, մասնագիտական բարձր արժեքների եւ որակների ձեւավորման հեռանկարը: Եթերից արտաքսված ազատ խոսքն ու տեղեկատվությունը ապաստան գտան տպագիր մամուլում, որտեղ նաեւ որոշ ձեւախեղումների ենթարկվեցին: Հասարակական լսարանի համար տպագիր մամուլի եւ հեռուստաընկերությունների միջեւ ընթացող բնական մասնագիտական մրցապայքարի փոխարեն ծայր առավ հեռուստաընկերությունների միջոցով տպագիր մամուլը խեղդամահ անելու գործընթացը: Եթե հեռուստաընկերություններն այդ գործընթացն իրականացնող մեքենայի շարժիչն էին, ապա վերահսկվող խոշոր ֆինանսատնտեսական գործիչները՝ վառելանյութը:

Առեւտրային գովազդը դարձավ վերահսկվող հեռուստաեթերի մենաշնորհը, դրանով իսկ տպագիր մամուլին աստիճանաբար զրկելով գոյության հիմնական աղբյուրից՝ գովազդից: Գովազդի բացակայությունը թերթերին պետք է կանգնեցներ ստվերային ֆինանսավորման պարտադրանքի առջեւ: Իշխանությունների պայքարը՝ հայտնաբերել ստվերային ֆինանսավորողներին, ոչ այնքան թերթերի ֆինանսական շրջանառությունն օրինականացնելու, որքան տպագիր մամուլը վերջնականապես խեղդամահ անելու խնդիր է հետապնդում: Ընդ որում, թերթերի ֆինանսավորման խնդիրը Հայաստանում ոչ թե տնտեսական, այլ քաղաքական հարթությունում է, քանի որ վերահսկվող տնտեսության, ինչպես նաեւ գործարարության ու տնտեսության սերտաճման պայմաններում ֆինանսատնտեսական գործիչները չեն հանդգնի ներդրումներ անել կամ լայնածավալ գովազդ տեղադրել իշխանության կողմից չվերահսկվող թերթերում: Մանավանդ որ, այդ գործիչներն իրենց գործունեությամբ նաեւ խոցելի են: Բնականաբար, այսօրինակ իրավիճակում, երբ ազատական տնտեսական հարաբերությունները չեն գործում, թերթերը հնարավորություն չունեն կամ էլ անիմաստ են համարում բաժնետոմսեր թողարկել՝ ձեռք բերելով բաժնետերեր, այսինքն՝ ներդրումներ եւ ներդնողներ, որոնք կգործեն ոչ թե ստվերում, այլ հրապարակային պայմաններում: Այդ ժամանակ միայն թերթն իրենից ոչ միայն հասարակական, այլեւ ֆինանսական արժեք կներկայացնի:

Առեւտրային գովազդն այն կայմն էր, որին պետք է խարիսխ նետեր ազատ մամուլը՝ ձերբազատվելով քաղաքական բեւեռվածությունից, սահմանազատվելով ցածրարժեք լրագրությունից, առաջնորդվելով լրագրության միջազգային չափորոշիչներով եւ ստեղծելով իր ֆինանսատնտեսական եւ քաղաքական անկախության հիմքերը: Մամուլի ազատությունն ու անկախությունն այն սյուներն էին, որոնց վրա պետք է կառուցվեր եւ ամրանար ազատ հասարակության շենքը: Ազատ եւ անկախ մամուլը նաեւ այն ջրհորն էր, որն անընդմեջ եւ տեւական մարտերից հետո ժամանակ առ ժամանակ հայտնվում էր հակառակորդի դիրքերում, եւ կամ պետք փակվեր, կամ թունավորվեր, կամ ազատագրվեր:

Իր քսանամյա նավարկության ընթացքում հետխորհրդային Հայաստանի մամուլը բազմաթիվ այլ խութերի բախվեց: Չկարողանալով ամբողջությամբ վերահսկել տպագիր մամուլը՝ իշխանություններն ամբողջական վերահսկում սահմանեցին թերթերն իրացնող տարածման գործակալությունների վրա՝ դրանով իսկ թերթ-ընթերցող բնականոն կապի պարանին հայտնվեցին-ավելացան նոր եւ բարդ հանգույցներ, որոնք դժվարանցանելի դարձրին այդ կապը՝ խաթարելով թերթերի վարկանիշի իրական պատկերը: Սոցիալ-տնտեսական բարդ պայմանները, ազգաբնակչության ցածր գնողականությունը դարձան թերթ-ընթերցող բնականոն կապի խաթարման հաջորդ պատճառը: Թերթ կարդալու սովորույթն այդպես էլ ավանդույթի չվերածվեց: Թերթերը կորցրեցին (թեպետ չէին էլ գտել) նոր սերնդին՝ երիտասարդությանը: Այսօր պետական բուհական համակարգում, անգամ՝ հումանիտար հատվածում, 100 ուսանողից հազիվ 5-ն է թերթ կարդում: Դրանով իսկ տպագիր մամուլն աստիճանաբար զրկվում է ապագայից:

Զրկված առեւտրային գովազդից, իր իսկ տպաքանակի իրացման վերահսկողությունից, բաժանորդագրությունների մեծ ծավալից, կքած տպագրական պարտքերի տակ՝ թերթերը գոյատեւման հարատեւ կռիվն էին մղում, երբ ժամանակ առ ժամանակ նրանց գլխին կախվում էր նոր օրենքների կամ օրենսդրական չարաղետ փոփոխությունների դամոկլյան սուրը, որը հեռացնելու՝ թերթերի պայքարը թեպետ կարճատեւ, բայց կարեւոր հաղթանակներ ապահովեց: Եվ թեպետ տպագիր մամուլի ազատության սահմանափակումների մեխանիզմներն օրենսդրորեն ամրագրվեցին, սակայն տպագիր մամուլի ամբողջական վերահսկումը ձախողվեց: Սակայն ամեն ինչ դեռ առջեւում է, եւ օրենսդրական նոր փոփոխությունները վկայում են իշխանությունների աննահանջ քայլքի մասին:

Լինելով հասարակական կյանքի անդրադարձը, հայելին՝ տպագիր մամուլն ինքն էլ զերծ չմնաց հասարակական արատներից, որոնցից ամենամտահոգիչը մասնագիտական որակների, պրոֆեսիոնալիզմի նահանջն էր: Այն հետեւանք է նախ եւ առաջ լրագրության հայաստանյան նոր դպրոցի չկայացման, ինչը զրկում էր թերթերին լրագրողական սահուն սերնդափոխություն ապահովելուց: Մասնագիտական որակների նահանջի մյուս պատճառը հայաստանյան այն արատավոր շրջանն էր, որի մեջ հայտնվել էր հասարակությունը՝ չկարողանալով տարբերել ոչ միայն թացը չորից, գեղեցիկն այլանդակից, սուտը ճշմարտությունից, այլեւ արժեքավորն անարժեքից, մնայունն անցողիկից, պարկեշտությունն անպարկեշտությունից: Եթե տպագիր մամուլին հաջողվեր դուրս մնալ այդ արատավոր շրջանից կամ ճեղքել այն, ապա ոչ միայն մասնագիտական արժեքներն անխաթար կպահեր եւ վերելք կապրեր, այլեւ մեծապես կնպաստեր հասարակական կյանքի եւ գործընթացների առողջացմանը: Դա կորցրած հնարավորությունների շրջանն էր հայաստանյան մամուլի համար: Այդ արատավոր շրջանը նպաստեց մասնագիտական ցածր որակներով թերթերի ի հայտ գալուն, թերթեր, որոնք նույնքան, գուցե ավելի պահանջարկված էին, քան լրջմիտ թերթերը: Սա զուտ ներհայաստանյան երեւույթ չէ. միջազգային մամուլում միշտ էլ առկա են երկու կողմեր՝ էլիտար, ազդեցիկ, լուրջ թերթեր եւ աղմկահարույց, դյուրին ընթերցվող, զանգվածային թերթեր, որոնք անգլիացիները քամահրանքով թաբլոիդներ՝ թերթոններ են կոչում: Սա հավերժական բանավեճ է, հավերժական պայքար եւ կավարտվի տպագիր մամուլի հետ: Հայաստանյան մամուլի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ, նախ, հստակ սահմանազատված չեն թաբլոիդները եւ էլիտար թերթերը՝ դրանցից յուրաքանչյուրը հաջորդ համարում կարող է սահմանազանց լինել: Բացի այդ: Գրեթե բոլոր թերթերը մղում են գոյության պայքար, եւ առանձնապես չեն պայքարում առանց այն էլ ոչ մեծաթիվ ընթերցողների համար: Հայաստանյան թերթերը խեղճ են հավասարաչափ՝ իրենց ձեւաչափերով, փոքրաթիվ էջերով, սեւ-սպիտակ տպագրությամբ, ցածր տպաքանակներով նրանք հիմնականում լուծում են նույն խնդիրը՝ ոչ թե երկարակեցության եւ զարգացման, այլ գոյության, ոչ անգամ վաղվա, այլ այսօրվա խնդիրներ:

Հայաստանյան տպագիր մամուլի առջեւ կանգնած հաջորդ խնդիրը նրա բովանդակային մասն է, որի լավ կամ վատ լինելուց թերթի կյանքը թեպետ չի փոխվում, սակայն այդ բովանդակությունը կարող է փոխել հասարակական ընկալումները՝ հանրությանը դարձնելով ավելի տեղեկացված, մտածող, պրպտող, հետաքրքրասեր, լայնախոհ, ընդգրկուն աշխարհընկալմամբ: Հայաստանյան մամուլը տեղայնացված է, ներփակված հիմնականում հայաստանյան խնդիրներով, ժանրային եւ թեմատիկ բազմազանության պակասով, ոչ այնքան հետեւողական իր իսկ առաջ քաշած խնդիրների հետագա ճակատագրով:

Այս ամենով հանդերձ տպագիր մամուլը համընդհանուր անազատության մեջ իսկական ապաստան է: Այն նման է անապատի երկար եւ անվերջ թվացող ճանապարհից հետո երեւացող բնակավայրի, ապաստանի, որտեղ բնակվում կամ պատսպարվում են ազատ տեղեկատվությունը, ազատ խոսքը, ազատ մտքերը եւ ազատ մարդիկ: Այն ամենը, ինչը հնարավոր է եղել փրկել անապատի ուժահատ անող քամուց եւ խանձող արեւից: Այն ապաստանը, որը ցավալիորեն հնարավոր չի լինում վերածել տան, որտեղ մարդիկ ոչ միայն պատսպարվեն, այլեւ որտեղ բնակություն հաստատի հասարակությունը: Աճի, առաջադիմի եւ զարգանա:

Տպագիր մամուլին դատապարտելով գոյատեւման, նրան զրկելով զարգացման հնարավորություններից՝ նշանակում է հասարակությանը եւս զրկել զարգացման հեռանկարից: Իսկ առաջադիմություն ու զարգացում չունեցող հասարակությունը չի կարող առաջադեմ եւ զարգացող պետություն կայացնել:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄ

# Միաբեւեռ աշխարհն ու Հայաստանը

**Հետխորհրդային շրջանը ավանդաբար ընդունված է անվանել միաբեւեռ աշխարհակարգի հաստատման ժամանակաշրջան: ԽՍՀՄ-ի քայքայումը հանգեցրեց ԱՄՆ-ի միահեծան իշխանությանը ողջ աշխարհում: Թվում էր, թե ի՞նչ է կատարվել որ. տոտալիտար քաղաքական համակարգը փլուզվել է, իսկ աշխարհում գերիշխանություն էր հաստատել ժողովրդավարություն, մարդու իրավունքներ ու խոսքի ազատություն քարոզող երկիր, եւ Երկիր մոլորակն այս ամենից պետք է որ միայն շահի: Իդեալիստական այս մտածելակերպն այն աստիճան էր տարածված ու հաստատված, որ ամերիկյան փիլիսոփա եւ աշխարհաքաղաքագետ Ֆրանցիսկո Ֆուկույաման գրեց իր հայտնի «Պատմության ավարտը» աշխատությունը: Բոլորը համոզված էին, որ «չարության կայսրության» անկումը նոր քաղաքական ժամանակաշրջան՝ խաղաղություն եւ երջանկություն կբերի աշխարհին: Սակայն պատմաքաղաքական հետագա դեպքերը եկան ապացուցելու, որ աշխարհը իդեալիստական գույներով նկարագրողները, մեղմ ասած, մի փոքր շտապել էին, որովհետեւ ԱՄՆ-ի միահեծանությունն իր ձեւով քիչ էր տարբերվում, իսկ իրականում՝ ընդհանրապես չէր տարբերվում նախկինում եղած բոլոր կայսրությունների՝ Հռոմեականից մինչեւ Խորհրդային Միության, գործունեությունից: Սկսված բազմաթիվ պատերազմները եւ քաղաքական փոփոխությունները, ու ընդհանրապես, ժողովրդավարության եւ ազատության տարածման անվան տակ սկսված բախումներն ու պատերազմները հանգեցրին ոչ միայն բազմաթիվ զոհերի, այլեւ ժողովրդավարության նկատմամբ հավատի անկմանը ողջ աշխարհում:**

**Նման երկար նախաբանն անհրաժեշտ էր, որ հասկանանք, թե ինչու է աշխարհի կառավարման միաբեւեռ քաղաքական համակարգն ավելի վատ, քան երկբեւեռ կամ բազմաբեւեռ աշխարհը: Իսկ այժմ, վերադառնալով մեր իրականություն, փորձենք պատկերացնել, թե ինչ է տեղի ունենում Հայաստանում: 1995-ի՝ առաջին նախագահի «ջանքերով» ընդունված սահմանադրությունը Հայաստանում նույնպես հաստատեց միաբեւեռ քաղաքական համակարգ: Մեր երկրում, չնայած տարբեր քաղաքական ինստիտուտների եւ սահմանադրության հռչակած իշխանական երեք թեւերի՝ գործադիրի, օրենսդիրի եւ դատականի անկախությանը, իրականում այս ամենը պտտվում, ենթարկվում ու կատարում է քաղաքական մեկ բեւեռի՝ հանրապետության նախագահի հրամանները: Այսինքն՝ Հայաստանում կա քաղաքական մեկ կենտրոն, եթե կուզեք՝ միայն մեկ քաղաքական գործիչ, ու քաղաքական մեկ ուժ, հանձին նախագահի եւ նախագահականի, որը եւ թելադրում է ողջ քաղաքական եղանակը Հայաստանում: Կառավարության ղեկավարը, Ազգային ժողովի նախագահը, կամ, ասենք, Սահմանադրական դատարանի նախագահը, հանրապետության նախագահի շուրջը պտտվող եւ նրան ենթարկվող արբանյակներ են, ովքեր ինքնուրույն չեն իրենց քաղաքական որոշումների եւ քայլերի մեջ: Եվ այսպես է եղել անկախ Հայաստանի ողջ պատմության ընթացքում, հանրապետության բոլոր նախագահների օրոք: Միաբեւեռությունը եւ քաղաքական միայն մեկ կենտրոնի առկայությունը թույլ չեն տվել քաղաքական երկխոսության զարգացմանն իրար հակադրվող քաղաքական ուժերի միջեւ, ընդդիմությունը քշվել է քաղաքական լուսանցք, ինչը նաեւ հանգեցրել է՝ Հայաստանում քաղաքական մշակույթի անկատարությանը եւ ընդհանրապես այդ մշակույթի լիակատար բացակայությանը:**

**Այսինքն՝ քաղաքական միաբեւեռությունը Հայաստանի հետագա զարգացման հիմնական խոչընդոտն է. քանի դեռ երկրում կա ու գործում է քաղաքական միայն մեկ կենտրոն՝ երկխոսությունն ու այլակարծությունը դառնում են անիմաստ, իսկ մեր երկրում իրական ժողովրդավարության հաստատման մասին խոսելը՝ անլուրջ:**

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
Արմենական-ՌԱԿ փոխնախագահ

# Ցեղասպանությանն առնչվող երկու անընդունելի դեպք ԱՄՆի հայ համայնքում

Միացյալ Նահանգներում վերջին օրերին Հայոց ցեղասպանության տարելիցի հետ կապված երկու հանգամանք խորապես ցնցել է ինձ եւ ոչ միայն ինձ: Այդ երկու հանգամանքներն էլ առաջին հայացքից կարող են անկարեւոր եւ աննշան թվալ, բայց հղի են լուրջ հետեւանքներով, որոնք կանխելն առավել հեշտ է, քան չեզոքացնելը:

Առաջինը՝ երեք օր առաջ USArmenia TV-ի («Արմենիա TV»-ի Սփյուռքին ուղղվող տարբերակը) եթերում էր երգչուհի **Քրիստինե Պեպելյանը**, որ այս անգամ Լոս Անջելեսից վարում էր այն տասնյակ անբովանդակ եթերներից մեկը, որոնք սովորաբար ստանձնում է Հայաստանում: Այս անգամ, սակայն, Քրիստինեի հյուրերն էին երկու երիտասարդ, որոնք ներկայացնում էին տխրահռչակ «Կյանքի խոսք» աղանդը: Ողջ հաղորդումը նվիրված էր նրան, որ երիտասարդներն ապրիլի 24-ին կազմակերպում են խաչաձեւ երթ՝ Գլենդեյլի փողոցներով, եւ հրավիրում էին բոլոր հայերին՝ միանալ իրենց միջոցառմանը: Բնականաբար, աղանդներին հատուկ քարոզչության բոլոր կանոնների համաձայն, իրենց աղանդի անունը երիտասարդները մի քանի անգամ միայն հիշատակեցին՝ փոխարենը կենտրոնանալու իրենց «քրիստոնեական» եւ «հրաշալի» մտահղացման վրա, ու մինչ Քրիստինե Պեպելյանը տալիս էր այն հարցերը, որ հայ «հեռուստահաղորդավարներն» ուղղում են իրենց հյուրերին գովազդելու նպատակով, երիտասարդներն ավելի մեծ ոգեւորությամբ էին պատմում իրենց «ազգանվեր» եւ «բացառիկ» մտահղացման մասին: Անթույլատրելի է, որ կրոնական աղանդը՝ հոգեորսության PR ապահովելու նպատակով շահարկում է նահատակների ոգեկոչման հանգամանքը: Առավել տխուր է, որ այդ քարոզին ջանադրաբար մասնակցում է հայկական շոու բիզնեսի ներկայացուցիչներից մեկը: Արդյոք այս երգչուհի՞ն էլ մյուսների պես (ըստ մամուլի հրապարակումների՝ Արմինկան, Շպռոտը, Անդրեն եւ այլք կյանքիխոսքականներ են) զինվորագրվել է «Կյանքի խոսք» աղանդին, թե՞ ոչ:

Որ հայաստանյան «Շանթ»-ի գործընկեր ARTN TV-ն իր եթերը պարբերաբար տրամադրում է հայկական ամենատարբեր աղանդավորական կազմակերպություններին՝ եթերային ժամերգությունների եւ անգրագետ քարոզների համար՝ հայտնի է բոլորին, բայց որ CS Holding-ն էլ նման գործողությունից չի խորշում՝ նորություն էր:

Երկրորդ հանգամանքը, որ առավել լուրջ հետեւանքներ կարող է ունենալ, վերաբերում է Հայաստանյայց առաքելական եկեղեցու արեւելյան թեմի Նյու Յորքի Սբ Վարդան Մայր տաճարի՝ ապրիլի 23-ի երեկոյան տեղի ունեցած համերգից հետո, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան **Կարեն Նազարյանի** ելույթին: Իր խոսքում դեսպանն ասաց, որ (մեջբերում ենք ոչ բառացի եւ թարգմանված) «ճնշված եւ հալածված ազգի ազատ լինելու ցանկությամբ պայմանավորված ապստամբելու արդար հանգամանքը որեւէ կերպ իրավունք չի տալիս հալածողին եւ ճնշող միավորին իրականացնելու Ցեղասպանություն»: Թեեւ դեսպանի ելույթը վերջում ծափահարությունների արժանացավ, սակայն ակնհայտ էր եկեղեցու դահլիճում տիրող դժգոհությունը: Դեսպան Նազարյանի սխալը ոչ միայն պայմանավորված է պատմության այդ շրջանի անտեղյակությամբ, այլեւ վտանգավոր է Հայոց ցեղասպանության ճանաչման համար: ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցչի պաշտոնն ամենակարեւորներից է, եւ նման պաշտոնյայի կողմից այսպիսի խոսքերի արտաբերումը կարող է ԱԳՆ-ից իր դեսպաններին տրվող ցեղասպանության մասին պաշտոնական ուղենիշների բացակայության ապացույց համարվել: Թեեւ դեսպան Նազարյանն իր խոսքում խստորեն դատապարտեց ցեղասպանությունը, սակայն ինքը ջուր լցրեց նույն թուրքերի ջրաղացին, ըստ որոնց՝ իրենք ճնշել են հայերի ըմբոստությունները: Ըմբոստություններ չեն եղել, եղել են ինքնապաշտպանության դեպքեր, որոնք պատասխան էին տասնամյակներ շարունակ տարվող ցեղասպանական գործողությունների եւ ջարդերին, որոնք վերջնական քաղաքական-գաղափարախոսության եւ խիստ կազմակերպված համակարգային տեսք ստացան Առաջին համաշխարհայինի օրերին: Ցեղասպանությունը նախագծվել եւ իրականացվել է ոչ թե ի պատասխան հայերի արդար կամ հիմնավոր պահանջների, այլ՝ որպես միակ լուծում ազատվելու համար բնիկ տարրից, որ Թուրքիայի ֆինանսական, տնտեսական եւ մշակութային կյանքի առաջատարն ու դոմինանտն էր եւ որ թուրքերին ներշնչում էր նույն այն զգացողությունը, ինչ երեք տասնամյակ անց՝ դրդելու էր Հիտլերին իրականացնելու XX դ.-ի երկրորդ Ցեղասպանությունը՝ հրեական Հոլոքոստը:

Դահլիճում ներկա իմ մի հրեա բարեկամը, որ եկել էր հարգելու Հայոց եղեռնի զոհերի հիշատակը, դժգոհություն արտահայտելով՝ ասաց. «Դա նույնն է, ինչ Իսրայելի դեսպանն ասեր, որ հրեաները դժգոհ էին Երրորդ ռեյխի ճնշումներից եւ մտածում էին արդարացիորեն ապստամբել, երբ Հիտլերը որոշում ընդունեց այդ արդար պահանջները ցեղասպանության միջոցով լուծելու: Անհնար է»: Իմ հրեա բարեկամն արդարացի է: Հրեաների պարագայում դա անհնար է, անհնար պետք է լիներ նաեւ հայերի պարագայում: Այժմ ստիպված ենք ասել՝ նման տեսակետների արտահայտումը Հայաստանի պաշտոնյաների կողմից անթույլատրելի է:

Թեեւ Կարեն Նազարյանը փորձառություն ունեցող դիվանագետ է եւ անգլերեն վարժ է կարդում, բայց ՄԱԿ-ում դիվանագետ լինելու հանգամանքը պարտականությունների առավել լայն շրջանակ է ենթադրում. օրինակ՝ սեփական պատմության ամենաողբերգական եւ քաղաքականապես առօրեական հարցի համակարգային գիտություն եւ այդ հարցի ազգային շահից բխող լուսաբանում ու քարոզում:

**ՀԱՅԿ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
**Պատմաբան, Սորբոնի համալսարանի քաղաքագիտության դոկտորանտ**
*24 ապրիլի, 2010 թ., Նյու Յորք, ԱՄՆ*

# Բազմաշերտ Կովկաս՝ նոր վերլուծություն

**Եվրասիական հանդեսն իրազեկում է, թե Կովկասի մասին երկու նոր հրապարակումներ են ամփոփվել իրենց նոր՝ 272 էջանոց համարում: «Կովկաս. պատմություն, մշակույթ, քաղաքականություն» վերնագրյալ հրատարակության հեղինակները քաղաքագետ, Մյունխենում Կենտրոնական Ասիայի քաղաքագիտական ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար, Վրաստանում ԵԱՀԿ-ի աշխատակից Մարի Քարին ֆոն Գումփփենբերգը եւ Համբուրգի Արեւելքի ինստիտուտի նախկին տնօրեն, պրոֆեսոր Ուդո Շթայնբախն են:**

**Աշխարհաքաղաքական մեծ դեր ունեցող՝ գազով եւ նավթով հարուստ տարածաշրջանը, հատկապես Եվրոպայի համար ռազմավարական եւ քաղաքական անվտանգության տեսակետից մեծ նշանակություն ունեցող գազամուղն ու նավթամուղն այս կռվախնձոր տարածաշրջանը դարձնում են ճգնաժամային: Ու հաճախ մոռացության է մատնվում, որ Կովկասը հարուստ է մշակույթների բազմազանությամբ, գեղեցիկ բնապատկերներով: Սույն գրքում բազմաթիվ փորձագետներ լույս են սփռում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի ռուսական շրջանների՝ Չեչնիայի, Դաղստանի, Ինգուշիայի, ինչպես նաեւ հարեւան Թուրքիայի եւ Իրանի վրա: Տրված է հակամարտության մեծ օջախների՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի, Լեռնային Ղարաբաղի, Չեչնիայի պատմական եւ քաղաքական նկարագիրը: Ինչպես գրքի մասին գրախոսականն է իրազեկում, սա եզակի հայացք է Կովկասին: Գիրքն արկածային գրականություն չէ, այլ՝ ճշգրիտ վերլուծություն: Հատորն արժե 14,95 եվրո:**




**Ան. Հ.**
**Գերմանիա**

# Հունաստանը 3 տարում կստանա 110 մլրդ եվրո

**Եվրոմիության 27 երկրներից 16-ի ֆինանսների նախարարները համաձայնության են եկել, որ Հունաստանին հատկացվելու է 110 մլրդ եվրո ֆինանսական օգնություն: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Բրյուսելում նախարարների հանդիպումից հետո Եվրոխմբի նախագահ Ժան-Կլոդ Յունկերը լրագրողներին պատմել է, որ հաստատվել է Հունաստանի տնտեսության փրկությանն ուղղված միջոցների փաթեթ: Նախատեսվում է երեք տարում հատկացվելիք 110 մլրդ եվրոն բաժանել երկու մասի. 80 մլրդ կհատկացնի Եվրոմիությունը, 30 մլրդ՝ Արժույթի միջազգային հիմնադրամը:**

**Ֆինանսական օգնության փաթեթը դեռ պետք է հաստատվի եվրոգոտու մի շարք երկրների խորհրդարաններում, ինչպես նաեւ ԱՄՀ-ում: Այդուհանդերձ, Յունկերի խոսքերով, Հունաստանը մինչեւ մայիսի 19 կստանա որոշակի գումար, իսկ ամբողջ առաջին տարում՝ 30 մլրդ եվրո:**

**Մայիսի 7-ին Բրյուսելում տեղի կունենա ԵՄ ղեկավարների արտակարգ գագաթաժողով, որի գլխավոր թեման դարձյալ կապված կլինի Հունաստանին հատկացվելիք ֆինանսական օգնության հետ:**

**Մայիսի 2-ին Հունաստանի վարչապետ Գեորգիոս Պապանդրեուն հայտարարեց, որ ԱՄՀ-ն եւ ԵՄ-ը համաձայնության են եկել վարկի առնչությամբ: Օգնության դիմաց Հունաստանը պարտավորվել է կատարել մի շարք պայմաններ, մասնավորապես՝ կրճատել բյուջեի պակասորդը եւ վերանայել հարկային օրենսդրությունը:**

# Աբբաս. «Համաձայն ենք Իսրայելի հետ անուղղակի բանակցությունների»



Պաղեստինի ազատագրման կազմակերպության գործկոմը համաձայնություն է տվել իսրայելա-պաղեստինյան անուղղակի բանակցությունների անցկացմանը: Այդ մասին «Ալ-Այյամ» թերթին տված հարցազրույցում հայտարարել է Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասը: Նրա խոսքերը մեջբերելով՝ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ, Արաբական պետությունների լիգայի հանձնարարականներին համապատասխան, բանակցությունները պետք է տեւեն 4 ամիս:

Արաբական լիգան մայիսի 1-ին հավանություն էր տվել պաղեստինաիսրայելական հաշտության անուղղակի բանակցությունների վերսկսմանը: «Ես չեմ ուզում հույսս կորցնել, թեեւ հաշտության դեմ հանդես եկողները շատ են», նշել է Աբբասը:

Նա հաստատել է, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հրավերով մայիսին այդ երկիր կայցելի պաղեստինա-իսրայելական հաշտեցման գործընթացն առաջ մղելու նպատակով: Միեւնույն ժամանակ Աբբասը մերժել է իր այցի ընթացքում իսրայելցի պաշտոնական անձանց հետ հանդիպում ունենալու հնարավորությունը:

«Ամերիկացիները եզրակացրել են, որ պաղեստինյան անկախ պետության ստեղծումը համապատասխանում է ԱՄՆ-ի շահերին, ուստի հենց նրանք են ջանքեր գործադրում, չնայած իսրայելական լոբբիի հարուցած խոչընդոտներին եւ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի քայլերին», ավելացրել է պաղեստինցի ղեկավարը:

Մահմուդ Աբբասը նաեւ հաստատել է այն լուրերը, որ շուտով փոփոխություններ են կատարվելու Պաղեստինյան ինքնավարության կառավարությունում:

# Թալիբների «սպանված» առաջնորդը սպառնում է ԱՄՆ-ին

*Պայթուցիկ սարքեր Նյու Յորքում եւ Պիտսբուրգում*

**«Թալիբան» շարժումը հրապարակել է իր պակիստանյան թեւի առաջնորդ Հակիմուլլահ Մեհսուդի տեսագրված ելույթը: 2010-ի հունվարին Մեհսուդը իբր «սպանվել» էր ամերիկյան օդուժի գրոհից: Մինչդեռ մայիսի 3-ին Ֆրանսպրեսը հաղորդեց նրա 9-րոպեանոց ելույթի մասին, որը, փորձագետների կարծիքով, տեսագրված է ապրիլի 4-ին:**



**Իսլամիստական կայքէջերից մեկում հրապարակված ելույթում Մեհսուդը ԱՄՆ-ին սպառնում է նոր ահաբեկչություններով: «Շուտով մեր ռազմիկները կհարվածեն ամերիկյան նահանգների խոշորագույն քաղաքներին», նախազգուշացնում է թալիբ առաջնորդը: Նա ԱՄՆ-ի դաշնակիցներին խորհուրդ է տալիս այլեւս չգործակցել ամերիկացիների հետ, այլապես իրենք կենթարկվեն էլ ավելի դաժան պատիժների:**

**Մեհսուդի սպառնալիքը կարծես արդեն իրողություն է դառնում: Մայիսի 1-ին Նյու Յորքի գլխավոր հրապարակում՝ Թայմս-սքվերում զուտ պատահականորեն չիրականացավ մի ահաբեկչություն, որը կարող էր հանգեցնել լուրջ հետեւանքների եւ մարդկային զոհերի: Ականված «Նիսսան» ավտոմեքենայում տեղի ունեցավ «պայծառ բռնկում», ծուխ դուրս եկավ, բայց պայթյուն տեղի չունեցավ: Ռոբոտի միջոցով ավտոմեքենայից դուրս բերվեցին պրոպանի 9-կիլոգրամանոց 3 բալոն, բենզինով լի երկու կանիստր, լարեր եւ ժամացույցի մեխանիզմ: Մոտակա տեսախցիկն արձանագրել էր ավտոմեքենայից արագ հեռացող հավանական ահաբեկչին:**

**«Թալիբան» շարժումը իսլամիստական կայքէջերից մեկում ստանձնեց ձախողված ահաբեկչության պատասխանատվությունը: Սակայն Նյու Յորքի ոստիկանությունը դեռ կասկածներ ունի եւ քննում է նաեւ այլ հնարավոր վարկածներ:**

**Հաջորդ օրը՝ մայիսի 2-ին պայթուցիկ սարք հայտնաբերվեց Պիտսբուրգ քաղաքում: Ռումբը դրված էր մայթի վրայի միկրոալիքային վառարանի մեջ, որի կողքով պետք է անցնեին մարաթոնյան վազքի մասնակիցները: Ոստիկաններին հաջողվեց կանգնեցնել մարզիկներին ու տարհանել բոլոր հանդիսականներին: Ռոբոտ-սակրավորը վնասազերծեց ռումբը, եւ մրցումները շարունակվեցին:**

**Ինչ վերաբերում է Հակիմուլլահ Մեհսուդին, նա «Թալիբանի» պակիստանյան թեւի առաջնորդը դարձավ 2009-ի ամռանը, երբ նախկին առաջնորդ Բայթուլլա Մեհսուդը սպանվեց ամերիկյան օդուժի հարվածից: 2010-ի հունվարի 31-ին ԶԼՄ-ներում լուրեր հայտնվեցին, թե Հակիմուլլահ Մեհսուդը սպանվել է ամերիկյան օդուժի գրոհի ժամանակ, սակայն ապրիլի վերջերին Պակիստանի հետախուզությունը կիսապաշտոնական ձեւով հերքեց թալիբ առաջնորդի մահվան լուրերը, հաղորդելով, որ նա ողջ է մնացել եւ արդեն ապաքինվել է վերքերից:**

AZG NEW PDF.qxd 03/05/2010 22:03 Page 1



ԱԶԳ

## Մշակույթ

# Առաջին ցուցադրության հետքերով

### Մանկական ստեղծագործության թանգարանի 40-ամյակի առիթով

Հենրիկ Իգիթյանի գեղագիտական կենտրոնը կամ մանկական ստեղծագործության թանգարանը՝ Աբովյան փողոցի վրա, երեւանցիներին հայտնի ու սիրելի օջախ է վաղուց արդեն՝ որպես արվեստի հանդեպ ոչ միայն վերաբերմունք մշակելու, նաեւ գեղագիտորեն սերունդ կրթելու բարձր չափանիշներով: Այս կենտրոնը ոչ միայն Հայաստանում, այլեւ Խորհրդային Միության տարածքում, իր տեսակի մեջ եղավ առաջինը, նախադեպը չունեցող: Եվ հիմնադիրը 20-րդ դարի 2-րդ կեսի հայ կերպարվեստի բուռն զարգացումների կիզակետում կանգնած ամենավառ անհատականություններից մեկը՝ Հենրիկ Իգիթյանն էր:

*«Դա 1968 թվականն էր, պատմում է այրին՝ Արմենուհի Հարությունյան-Իգիթյանը, երբ Նկարիչների միության սրահում կազմակերպվեց երեխաների նկարչական մի ցուցահանդես: Շնորհալի շատերը կային, եւ Հենրիկն ու իր կինը՝ վաղամեռիկ Ժաննա Աղամիրյանը ցավում էին, որ այդ հրաշալի գործերը կորչել-գնալու են. ծնվեց մանկական ստեղծագործությունների մշտական ցուցադրավայրի գաղափարը: Երեւանի այն ժամանակվա քաղաքապետ Գրիգոր Հասրաթյանը ընդառաջեց նրանց դիմումին՝ առավելություն տալով այդ առաջարկին: Գիտեք, երեւի, որ այս նույն վայրում դեկուստացիոն (գինու համտեսման) կենտրոն էր նախատեսված:*



**Նորա Հակոբյան. «Պատկերների բնությունը» շարքից, 1994**

*Առաջին ցուցահանդեսը կազմակերպվեց մեծ հաջողությամբ: Ցուցասրահի պատերին փակցված հայտագրերը շատ երեխաների բերեց այստեղ: Հավաքվեցին անթիվ նկարներ, որոնցից մի մասը՝ ամենաշնորհալիների գործեր, հիմք դարձան թանգարանի մշտական էքսպոզիցիայի»*:

Այսպես ձեւավորվել սկսվեց Մանկական ստեղծագործության թանգարանը եւ հարուստ պատմություն ու ավանդույթներ ստեղծեց: Այս տարի մարտին լրացավ թանգարանի 40-ամյակը, որն առիթ հանդիսացավ տնօրեն Արմինե Հարությունյան-Իգիթյանի մի շատ ինքնատիպ մտահղացման՝ կազմակերպելու թանգարանի առաջին ցուցահանդեսի մասնակիցների ներկայիս աշխատանքների ցուցադրություն, իհարկե՝ ովքեր ունեցան ստեղծագործական-նկարչական հետագա ընթացք:

Այս օրերին ցուցասրահը հյուրընկալել է նախկին սաներից հինգին՝ **Նորա Հակոբյան, Արեգ Էլիբեկյան, Գագիկ Շահինյան, Հասմիկ Սեւոյան, Վաղարշակ Էլիբեկյան**:

Տարբեր ոճեր, մտածողություններ, ուղղություններ միավորվել էին արվեստային ներդաշնակության մեջ: Արեգը նկարչական հայտնի Էլիբեկյան ընտանիքի ավանդույթների պահպանողն ու զարգացնողն է՝ ժամանակակից մտածողությամբ, ավելի տպավորապաշտական միտումներով ու գունային լուծումներով: Նա վաղուց ապրում է Կանադայում եւ բազմաթիվ ցուցահանդեսներ է ունեցել ինչպես այս, նաեւ եվրոպական այլ երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում: Նրա նկարչական աշխարհը սիրում է քաղաքային միջավայր ու բնության տեսարաններ, դրանց մեջ ձգվող տարածությամբ. սրճարաններ, փողոցային շարժուն պատկերներ՝ մարդկային ֆիգուրներով, գետն իր կամրջով, որոնք հանդարտ, հիմնականում կապտականաչի մեջ են ներծծված:

Հետաքրքրական ու բազմաշերտ են Հասմիկ Սեւոյանի պատկերաձեւերն ու գունային մեկնաբանությունները. ինքը սիրում է թափանցիկ շերտերի հարթության միջով քնարական զգացումներ դրսեւորել: Վերացարկված ձեւերի մեջ ակնհայտ են ներքին տրամադրությունների շարժումներ. գունային եւ հատկապես դրանց միջից «առկայծող» պատկերները հիշեցնում են Էդուարդ Խարազյանի նկարչությունը:

Ֆիգուրների դեֆորմացիան գունանկար կոնտրաստներում հեքիաթային, անիրական իրավիճակներ են ստեղծում Գագիկ Շահինյանի կտավներում՝ գույների հանդարտությունը ստատիկ վիճակ է փոխանցում. ասես քնի մեջ են իր հերոսները:

Վաղարշակ Էլիբեկյանի գունային վառ դրսեւորումներով՝ մուգ կապտամանուշակի, դեղնակարմրի ու գորշի խաղացկուն գալարումները ասես թաքցնում են իր հայացքը:

Սրահի առանձին հատվածում Նորա Հակոբյանի «Պատկերների բնությունը» շարքի աշխատանքներն են՝ անմոռանալի հայտնության պես: Ուզում եմ խոսել Նորայի՝ մարդկային նկարագրի այս թանկ ու հազվադեպ գոյության մասին: Երբ ճանաչում ես, ներսում ծնվող տաք զգացումը միշտ փայփայես՝ ինչպես հանկարծակի գտած հարստություն: Նորան իր նկարներում լուռ մենախոսում կամ թե՝ երկխոսում է բնության հետ: Բայց բնությունը ընդամենը արտաքին ներկայացում է, մակերես, պատկեր: Քիչ չեն այնպիսի ստեղծագործություններ, որտեղ պատկերի ռեալությունը տեսանելի իր վիճակից դուրս այլ աշխարհ է ներկայացնում: Բայց սա ուրիշ է, նկարչուհին նրբագծային ձեւերի մեջ ոչ թե զուտ բնության, այլ պատկերի բնությունն է նկարում, որոնց ամեն շարժման մեջ հոգեկան վիճակ-տրամադրությունների ելեւէջումներն ակնհայտ տարածված են:

Որքան կարոտ կա նկարի հեռուներում. մաքուր գծանկարների ետեւում որքան բանաստեղծական երազ, թույլ գույներից ծնվող խոհեր՝ հարազատ ինքնարտահայտությամբ: Եվ այդ նույն քնքշությունը, մեղմությունը, տաքությունն անգամ չորացած ծառերի մեջ են: Ծառը մտածողակիր էակ է, եւ պատահական չէ ծառի այս կերպարը՝ իր բաց մերկության մեջ նույնքան գեղեցիկ ու խոսուն, որքան՝ սաղարթների մեջ փակված: Ծառի կերպարային լուծումով նկարչուհին բացում է ներաշխարհի գույներ, որոնց երկխոսությունը ետմիջօրեի հետ, մայրամուտի ու լուսաբացի հետ հոգեկան տրամադրությունների արտահայտություններ են՝ երբեմն տագնապահար, երբեմն խաղաղ, երբեմն ունայնության, բայց միշտ կարոտի ելեւէջներն են ներկա... Ու ներկա է սերը:

«Ինչո՞ւ ծառ»: *«Մարդ է ծառը, բնավորություն ունի, հոգի ունի, ամբողջ մի աշխարհ:*

*Դալմայի այգու ծառերն են, բայց որպես այսպիսին, չկան, տեղից տեղ շարժվում՝ մի ճյուղ այստեղից, մի կադր մյուսից եմ վերցնում: Իրենք օգնում են, բայց շատ են հզոր, քան դու, ու դա ինձ ջղայնացնում էր, ուզում ես դու ղեկավարես, բայց ինքն է քեզ ղեկավարում: Պիտի սիրես, մտնես այդ հարաբերությունների մեջ, որի համար ժամանակ է պետք: Կարեւորը ճանապարհն է այդ վիճակի մեջ հաճախ հայտնվելու»:*

*«Առանձնությունը գուցե օգնո՞ւմ է»: «Տրամադրությունը շատ կարեւոր է, մենակությունն ինձ համար վաղուց իրական վիճակ է, այնքան էլ հաճելի բան չէ. մարդկային ջերմությունն է ապրեցնողը, սիրո ջերմությունը...»*:

Նորան Հակոբ Հակոբյանի ավագ դուստրն է՝ մասնագիտությամբ՝ ճարտարապետ: Վարպետին էլ այստեղ հանդիպեցի ու զրուցեցի մի փոքր: *«Ընդհանուր մաքրությունը իրենց գործերի, մթնոլորտի, ցույց է տալիս, որ արվեստի գործեր են՝ որեւէ բանով չպայմանավորված: Հեղինակներն ազատ մարդիկ են, որ սիրում են իրենց գործը»*: Վարպետը հետո խոսեց Հենրիկ Իգիթյանի մասին: *«Կարծում եմ՝ ավելի կարեւորություն պիտի տային այսօրվան՝ 40-ամյակն է այս թանգարանի, որ Սովետական Միության պատմության մեջ բացառիկ մեկ բան է: Արվեստի նկատմամբ հավատի ուժ պիտի ունենաս, որ կարողանաս այդ սարսափելի պայմանների մեջ, այդ դիմադրության մեջ ստեղծել այսպիսի թանգարան: Այս թանգարանը Իգիթյանը ստեղծեց:*



**Արեգ Էլիբեկյան. «Փարիզ, Մարե թաղամաս»**

*Մի սկզբունք կա, որ շատ կարեւոր է, նախ՝ արվեստագետն է գալիս, ապա՝ արվեստաբանը նրան հետեւում է: Իմպրեսիոնիզմը տերմին է արվեստաբանական. այն ստեղծվեց, երբ Կլոդ Մոնե նկարիչը նկարեց մի նկար, որ կոչեց «Իմպրեսիա», այսինքն՝ տպավորություն:*

*Արվեստաբանը տեսակ մը արվեստագետի եղբայրն է, իր կողքին է կանգնում, ուզում է օգնել՝ լուսաբանելով, պաշտպանելով: Եվ, ահավասիկ, Սովետական Միության մեջ քանի որ արվեստ չկար, արվեստաբան ալ չկար: Բայց ավելի սարսափելին այն էր, որ արվեստի տեսությունը արվեստից առաջ էր ընկած: Իգիթյանը արվեստաբանի նոր տեսակ էր, երբ հայտնվեցին Մինասը եւ ուրիշներ, նա՝ ազատ մտածող այդ տղան, կանգնեց նրանց կողքին, գնահատեց, ինքը սկսեց ընտրել:*

*Ահավասիկ այս թանգարանը խորհրդանշական իմաստ մը ունի: Երեխաները նրանք են, որ ստեղծագործում են նաեւ առանց իմանալու՝ ինչ են անում, դրանք անգիտակցականի արտահայտություններ են: Իգիթյանը ուշադրություն դարձրեց երեխաներին, նա հիմնեց նաեւ ժամանակակից արվեստի թանգարանը եւ մարդկանց, ում սիրում էր, պաշտպանում, ուզեց ցույց տալ, հակադրել, եթե կուզես: Իգիթյանը պետք է ըսել, բացառիկ մարդկանցից էր, որ հատուկ նշանակություն ունեցավ՝ որպես մշակույթի գործիչ»*:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՖՈՏՈՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

# Մամուլի ազատությունը ֆոտոլրագրողների հայացքով

**Մայիսի 3-ին ամբողջ աշխարհում նշվում է մամուլի ազատության միջազգային օրը:**

**Երեկ Նկարիչների միությունում բացվեց «Մամուլի ազատություն. տեղեկատվություն ստանալու իրավունք» թեմայով լուսանկարչական աշխատանքների ցուցահանդեսը:**

**Միջոցառումը կազմակերպել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի հետ համատեղ:**

**ՅՈՒՆԵՍԿՕ-ն այս տարի մամուլի ազատության համաշխարհային օրը նվիրել էր լրագրողների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքին:**

**«Միջոցառման նպատակն է հանրության եւ իշխանությունների ուշադրությունը հրավիրել Հայաստանում մամուլի եւ տեղեկատվության ազատության հիմնախնդիրներին», նշեց ԻԱԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանը:**



ARMENPRESS

**Ցուցահանդեսում ներկայացված են 30 լուսանկար, որոնք հետագայում հրապարակվելու են կատալոգում:**

**Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչը, ով ներկա էր բացման արարողությանը, իր ելույթում նշեց.**

**«Այս օրը նաեւ մեր հարգանքի տուրքն ենք մատուցում այն լրագրողներին, որոնք իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս հանդիպում են բռնությունների ու հարձակումների: Լրագրողների հարցերով հանձնաժողովի 2009-ի հաշվետվության համաձայն՝ տարվա ընթացքում սպանվել են 71 լրագրողներ: Մենք դատապարտում ենք լրագրողների նկատմամբ ոտնձգությունները, պետք է ամեն միջոց ձեռնարկել, որպեսզի լրագրողների աշխատանքի համար ստեղծենք լավ պայմաններ»:**

**Մարի Յովանովիչը հավելեց, որ վերջերս Freedom House-ի զեկույցում Հայաստանը նորից նշված էր ոչ ազատ, եւ մամուլին վերաբերող խնդիրների շարքում նախանշված էին բռնությունները, ինքնագրաքննությունները ու կողմնակալ մոտեցումը:**

**Լուսանկարների հեղինակներն իրենց հերոսների միջոցով ցույց են տալիս, որ մեր երկրում բացակայում է խոսքի ազատությունը եւ լուսանկարների միջոցով նրանք փորձում են կյանքի կոչել տեղեկատվություն ձեռք բերելու իրենց իրավունքը:**

**Ֆոտոլրագրող Անահիտ Հայրապետյանը, որ ցուցահանդեսի մասնակիցներից էր ասաց. «Ցուցահանդեսը նվիրված է մամուլի ազատությանն ու մարդու իրավունքներին, բայց անգամ այս սրահում չեն հարգում ֆոտոլրագրողին»:**

**Ա. Հայրապետյանը դժգոհեց մի թիկնապահի վերաբերմունքից, որը կոպտորեն հրել էր նրան, որպեսզի մի պաշտոնյայի քայլելու համար տեղ ազատի:**

**Ըստ Ա. Հայրապետյանի՝ Հայաստանում ազատ է այն, ինչը, որ չպետք է ազատ լինի, իսկ մամուլի ազատությունը, որն անհրաժեշտ է, իսպառ բացակայում է:**

**«Մենք կոչ ենք անում, որ լրագրողների նկատմամբ հարձակումների ու ոտնձգությունների դեպքերը հետեւողականորեն քննության առնվեն, քանզի անպատժելիության մթնոլորտը կարող է նպաստել վիճակի հետագա վատթարացմանը: Ակնկալում ենք՝ կներդրվի զրպարտության մասին օրենքի նոր դրույթը եւ այս տարվա հուլիսից հեռարձակման նոր լիցենզիաները կտրամադրվեն արդարացի կերպով,- նշեց Մ. Յովանովիչը,-նաեւ ողջունում ենք Հայաստանի կառավարության կողմից էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ստեղծում, որ Հայաստանի քաղաքացիների համար կառավարության կողմից տնօրինվող տեղեկատվությունը հեշտությամբ հասանելի լինի»:**

**Ֆոտոցուցահանդեսը բաց է լինելու մի շաբաթ, ներկայացված լուսանկարներն արվել են սկսած 1988 թվականից:**

**Հետաքրքրական էր «ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյան. իրազեկվելու պահը» լուսանկարը, որի հեղինակն է Գագիկ Շամշյանը:**

**Արմեն Աշոտյանը, որ ներկա էր միջոցառմանը, նշեց. «Կցանկանայի՝որպես հասարակություն ինքներս կատարենք ազատության չափագրումը եւ այդ չափագրումները չվստահենք որեւէ միջազգային կազմակերպության եւ չընդունենք նրանց զեկույցները որպես վերջին ատյանի ճշմարտություն: Քաղաքական մշակույթի աճմանը զուգընթաց ցանկալի է՝ աճեր նաեւ խոսքի ազատության մշակույթը: Հայաստանում մամուլի ազատությունը դեռեւս աճելու տեղ ունի»:**

**Ֆոտոլրագրող Սարգիս Վիրաբյանը նշեց, որ մեր երկրում մամուլի ազատություն, անշուշտ չկա, բայց եթե դրան նվիրված միջոցառում է կազմակերպվում, ուրեմն ամեն ինչ դեռ կորած չէ:**

**Բացման արարողությանը ներկա էր նաեւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսը, ով իր ելույթում ասաց. «Տեղեկատվության ազատությունն ու մատչելիությունն առանցքային կարեւորություն ունեն մարդկային արժանապատվության պաշտպանության համար եւ քաղաքացիներին հնարավորություն են ընձեռում ակտիվ մասնակցություն ունենալ հանրային կյանքում»:**

**Խոսքի ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է, որն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածում:**

**Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչեւան ասաց.**

**«1993թվականին ՄԱԿ-ի կողմից մայիսի 3-ը հայտարարվեց մամուլի ազատության օր: Տեղեկատվության ազատությունն անքակտելիորեն կապված է արտահայտման ազատության հետ, ուստի հիմնորեն կապված է նաեւ լրատվամիջոցների ազատության հետ»:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 03/05/2010 22:04 Page 1



# Առաջատար փառյակը հաստատեց իր առավելությունը

Խաղացանկի ճնահաճույճով ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 6-րդ տուրում առաջատար փառյակը մրցեց 5-8-րդ տեղերում ընթացող թիմերի հետ: Առաջատար փառյակը հաստատեց իր առավելությունն ու հերթական հաղթանակները տոնեց: Ճիշտ է, առաջնության միանձնյա առաջատար «Միկան» մեծ դժվարությամբ, միայն խաղավերջում կորզեց հաղթանակը: 89-րդ րոպեին խառը իրադրությունում գրոհին միացած «Միկայի» պաշտպան Հրայր Մկոյանը խփեց հանդիպման միակ գոլը, որը շատ կարեւոր հաղթանակ պարգեւեց թիմին` հնարավորություն ընձեռելով պահպանելու առաջատարի դիրքը:

Իսկ մինչ այդ 2 թիմերն էլ ունեին հաշիվը բացելու լավ հնարավորություններ: Առաջին խաղակեսում նախ «Իմպուլսի» պաշտպան Միխեիլ Սիմոնյանի հարվածը դիպավ դարպասաձողին, ապա նույնպիսի ճակատագրի արժանացավ Ալեքսի գլխի հարվածը: Հանդիպման ավելացված ժամանակում էլ «Իմպուլսի» պաշտպան Հրաչյա Միքայելյանի տուգանային հարվածից հետո «Միկայի» դարպասապահ Կլեւինսկասը փրկեց դրությունը: Ի դեպ, վերջինս արդեն 4 խաղ` 390 րոպե շարունակ դարպասը պահում է անառիկ:

Կապանում երկրի չեմպիոն «Փյունիկը» 6-1 հաշվով ջախջախեց «Գանձասարին»: Այդ խաղում արդյունավետությամբ աչքի ընկավ փյունիկցի Գեւորգ Ղազարյանը` դառնալով առաջնության 2-րդ հեթ տրիկի հեղինակը: Առաջինն իր օգտին էր գրանցել «Բանանցի» հարձակվող Սամվել Մելքոնյանն «Իմպուլսի» հետ կայացած 2-րդ տուրի խաղում: Ճիշտ է, Մելքոնյանը գոլերից 2-ը խփել էր 11 մ հարվածով: «Փյունիկից» 2 գոլի հեղինակ դարձավ Ալբերտ Թադեւոսյանը, մեկ գնդակ էլ խփեց Արտակ Եդիգարյանը: «Գանձասարից» միակ գոլն իր օգտին գրանցեց Արթուր Քոչարյանը: Նախորդ առաջնության լավագույն ռմբարկուն վերջապես բացեց գոլերի հաշիվն ընթացիկ մրցաշրջանում: Դա ՀՀ առաջնություններում Քոչարյանի 130-րդ գոլն էր:

Խոշոր հաշվով հաղթեց նաեւ գավաթի եզրափակիչի մյուս մասնակիցը` «Բանանցը», որը 3 անպատասխան գնդակ ուղարկեց «Կիլիկիայի» դարպասը: Աչքի ընկան Արարատ Առաքելյանը, Էդուարդո դո Սանթոսը եւ Նորայր Գյոզալյանը: Հաշիվը կարող էր ավելի խոշոր լինել, եթե «Բանանցի» ֆուտբոլիստները գրոհների եզրափակիչ փուլում ավելի գրագետ ու դիպուկ գործեին: Իսկ ահա «Կիլիկիայի» ֆուտբոլիստներն արդեն 4 խաղ է, ինչ չեն կարողանում գրավել մրցակիցների դարպասները:


ՖՈՏՈԼՈՒՐ

Անհաջող ելույթներն է շարունակում «Շիրակը», որին ոչ մի կերպ չի հաջողվում առաջին միավորը վաստակել: Նույնիսկ սեփական դաշտում շիրակցիներն անհաջող են խաղում: Հերթական խաղում Գյումրիում «Շիրակը» 0-2 հաշվով զիջեց «Ուլիսին»: Վերջինիս հաղթանակն ապահովեցին Վալերի Ալեքսանյանի եւ Նորայր Սահակյանի խփած 2 գոլերը: Նորայր Սահակյանն իր անդրանիկ գոլը խփեց «Ուլիսի» կազմում:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Միկա | 6 | 5 | 0 | 1 | 12-4 | 15 |
| 2. Փյունիկ | 6 | 4 | 2 | 0 | 15-4 | 14 |
| 3. Ուլիս | 6 | 4 | 1 | 1 | 10-3 | 13 |
| 4. Բանանց | 6 | 3 | 2 | 1 | 13-10 | 11 |
| 5. Իմպուլս | 6 | 2 | 1 | 3 | 5-10 | 7 |
| 6. Կիլիկիա | 6 | 2 | 0 | 4 | 6-10 | 6 |
| 7. Գանձասար | 6 | 1 | 0 | 5 | 4-14 | 3 |
| 8. Շիրակ | 6 | 0 | 0 | 6 | 2-12 | 0 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 4 |
| Էդուարդո դո Սանթոս | «Բանանց» | 4 |
| Ալբերտ Թադեւոսյան | «Փյունիկ» | 4 |
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 4 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 3 |
| Արսեն Ավետիսյան | «Գանձասար» | 3 |

# Հայրենասիրությունն ու սպորտը փոխկապակցված են

*Նվիրված Ռուսաստանի հայերի միության տասնամյակին*

**Հայրենասիրության լավագույն դրսեւորումներից մեկն, անշուշտ, սպորտն է: Կա՞ հպարտանալու, հպարտություն զգալու առավել մեծ հիմք, քան օտար երկրում բարձրացված քո երկրի դրոշն ու հնչեցված օրհներգը: Որքա՞ն հուզումնալի ու բերկրալի պահեր մեզ պարգեւեցին հայ ծանրորդները` վերջերս Մինսկում կայացած Եվրոպայի առաջնությունում: Իրոք հայրենասիրություն է սպորտը, նրանով է երիտասարդը դառնում սկզբունքային, ամուր, առողջ, պահանջկոտ` ինքն իր հանդեպ, իսկ սրանք չե՞ն արդյոք հայրենասիրության հիմքերը: Ուստի ամենեւին էլ պատահական չէ, որ հենց հայրենասիրության հիման վրա կառուցված Ռուսաստանի հայերի միությունը ակտիվ համագործակցություն է սկսել նաեւ հայրենական մարզաշխարհի հետ: Ավանդական կարատե-դո ֆեդերացիան արդեն երկու տարի է, ինչ Միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի անդամ է:**

**«Կիլիկիա» մարզադահլիճում կազմակերպված կարատե-դոյի 6-րդ հանրապետական մրցումները նվիրված էին Ռուսաստանի հայերի միության տասնամյակին, որը նշվելու է այս տարի: Միության եւ Համաշխարհային կոնգրեսի փոխնախագահ Վլադիմիր Աղայանը, ողջունելով ֆեդերացիայի անդամներին, մասնակիցներին ու հյուրերին, շնորհակալություն հայտնելով, որ միջոցառումը նվիրված է Ռուսաստանի հայերի միության տասնամյակին, նշեց. «Ռուսաստանի հայերի միությունը իրականացնում է մի շարք ծրագրեր Հայաստանում եւ Արցախում` ամենատարբեր ոլորտներում: Մենք մեր մասնակցությունն ունենք հայրենիքի հասարակական, կրթամշակութային կյանքում, ու սկսում ենք իրականացնել ծրագրեր նաեւ սպորտային կյանքում, որն իր հերթին` հայրենասիրության խորհուրդ ունի: Սպորտում, հատկապես կարատե-դոյի նման մարտարվեստում, կան բոլոր նախադրյալները, փիլիսոփայությունը` իսկական հայրենասեր, քաջարի ու մտավոր տոկուն, պարզապես լավ մարդ դաստիարակելու համար»: Այս ամենը ապացուցվեց նաեւ մրցումներին Երկրապահ կամավորականների վարչության ներկայացուցչի` Հակոբ Հակոբյանի մասնակցությամբ, որը վարչության նախագահ, Արցախի հերոս գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի անունից «Սպարապետ Վազգեն Սարգսյան» պատվոգրեր շնորհեց ֆեդերացիայի նախագահ Սուրեն Մնացականյանին եւ մի խումբ մարզիչների:**

**Լավագույն մարզիկի համար Ռուսաստանի հայերի միությունը նախատեսել է հատուկ գավաթ, որը կհանձնվի բոլոր ձեւերով լավագույնը ճանաչված մարզիկին:**

**Ռուսաստանի հայերի միության տասնամյակին նվիրված միջոցառումները շարունակվում են, որոնց մենք պարբերաբար կանդրադառնանք առաջիկա համարներում:**

**Հ. ԱՓՅԱՆ**

# Տատյանա Կոսինցեւան շարունակեց հաղթարշավը

Նալչիկում ընթացող շախմատի Գրան պրիի մրցաշարում հայ շախմատիստուհիներին ոչ մի կերպ չի հաջողվում կարգավորել խաղը: 5-րդ տուրում նրանց միջեւ կայացած մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Իսկ ահա հաջորդ տուրում մեր շախմատիստուհիները կրկին անհաջողության մատնվեցին: Էլինան սպիտակներով պարտվեց Հոու Յիֆանին, Լիլիթը սեւերով զիջեց Մոնգոնտուլին: 6 տուրից հետո Լիլիթ Մկրտչյանը 2,5 միավորով 9-րդ տեղում է, իսկ Դանիելյանը մեկ միավորով շարունակում է եզրափակել աղյուսակը:

Հաղթարշավն է շարունակում մրցաշարի միանձնյա առաջատար Տատյանա Կոսինցեւան: Նա հերթական հաղթանակները տոնեց Նանա Ձագնիձեի եւ Բաիրա Կովանովայի նկատմամբ եւ 5,5 միավորով վստահորեն գլխավորում է աղյուսակը: Նրան 1,5 միավոր է զիջում Հոու Յիֆանը, որը բացի Դանիելյանից, հաղթեց նաեւ Ժան Քսյունին:

3,5-ական միավորով 3-5-րդ տեղերն են բաժանում Նանա Ձագնիձեն, Պիա Կրամլինգը եւ Ժու Չենը: Նրանց կես միավոր են զիջում Կովանովան, Կոներուն եւ Մոնգոնտուլը: Յիլդիզը վաստակել է 2 միավոր, Քսյունը` 1,5:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Կարո Մուրադի 22-րդ հաղթանակը

**Գերմանիայի դրոշի ներքո հանդես եկող հայազգի բռնցքամարտիկ, կիսածանր քաշային Կարո Մուրադը մայիսի 1-ին առաջին անգամ պաշտպանեց WBO-ի վարկածով ինտերկոնտինենտալ չեմպիոնի կոչումը` ամերիկացի Թոմմի Կարպենսիի դեմ 12 ռաունդ տեւած մրցամարտում: Դեռ երկրորդ ռաունդում Ուլի Վեգների 179 սմ հասակ ունեցող 26-ամյա սանը ձախի ծանր հարվածով գետին տապալեց փենսիլվանիացուն, բայց առաջին անգամ իր հայրենի սահմաններից դուրս մրցամարտի ելած ամերիկացի, 185 սմ հասակ ունեցող 24-ամյա Ամի Թոմմի Կարպենսին ոտքի կանգնեց ու փորձեց գործածել երկար ձեռքերի առավելությունը: Նրա` հատկապես գոտկատեղից վեր շարժուն մարմինը Մուրադի հարվածներից հաճախ էր խույս տալիս: Թոմմին լավ էր մտապահել իր մարզիչ հայրիկի` ընդմիջումներին անընդհատ կրկնվող զգուշացումը` «մի՛ մոռացիր տարածություն պահել»:**

**Օլդենբուրգում միավորների ակնհայտ առավելությամբ (116-111, 117-110, 116-111), պրոֆեսիոնալ ռինգում իր 22-րդ մրցամարտում էլ անպարտելի ճանաչված սանից Ուլի Վեգներն այնքան էլ գոհ չէր: Մինչեւ մրցամարտի ավարտը Կարոն շատ ակտիվ էր, բայց Վեգների ասելով` «Մուրադը տակտիկապես ավելի խելացի պիտի լիներ»: Վտանգավոր պահեր շատ եղան, երբ իր հասցրած հարվածների տարափից հետո 26-ամյա Մուրադը մոռանում էր, որ դիմացինը կարող է շատ արագ հակահարված հասցնել ու չէր պաշտպանում դեմքը: «Կարպենսին շատ ուժեղ մրցակից էր», մրցելույթի ավարտին ասաց Մուրադը` հավելելով` մարզչիս հետ կդիտենք տեսագրությունը ու հետեւություններ կանենք»:**

**«Ճիշտ է, ապրիլի 24-ից մեկ շաբաթ արդեն անցել է, բայց հաղթանակս նվիրում եմ հայերին», ուղիղ եթերում տեսախցիկի առջեւ հայերեն ասաց Կարո Մուրադը: Հաղորդավարը չհասկացավ նրա ասածը ու չկարողացավ լսածը փոխանցել ARD-ի միլիոնավոր ակնդիրներին: Միգուցե ճիշտ կլիներ, որ Կարոն իր ասելիքը նաեւ գերմաներեն կրկներ, չէ՞ որ` թե վարժ տիրապետում է այդ լեզվին եւ թե` նրա երկրպագուները, բարեբախտաբար, միայն հայեր չեն:**

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Մոզլիին էլ չհաջողվեց ծնկի բերել Մեյվեզերին

**Լաս Վեգասում անցկացվեց ամերիկացի հանրահայտ բռնցքամարտիկներ Ֆլոյդ Մեյվեզերի եւ կիսամիջին քաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Շեյն Մոզլիի մենամարտը: Թեեւ մենամարտում ոչ մի տիտղոս չէր խաղարկվում, սակայն մրցամարտը մեծ հետաքրքրությամբ էր սպասվում: Դահլիճում ներկա էին հանրահայտ մի շարք անձինք, որոնց թվում էր Կալիֆոռնիայի նահանգապետ Առնոլդ Շվարցենեգերը:**

**Արդեն 2-րդ ռաունդում Մեյվեզերը հուժկու հարված ընդունեց, սակայն դա նրան չխանգարեց քիչ անց մրցակցին նոկդաունի ենթարկելու: Հաջորդ ռաունդներում Մեյվեզերի առավելությունն ավելի նկատելի էր: 6-րդ ռաունդում Մոզլին քիչ էր մնացել կրկին նոկդաունում հայտնվեր, իսկ 7-րդ ռաունդում մի շարք հարվածներ ընդունեց: Թեեւ ավարտական ռաունդներում Մոզլին զգալիորեն աշխուժացավ, սակայն դա բավական չէր մրցամարտը շահելու համար: Բոլոր մրցավարներն էլ միավորներով (119-109, 118-110, 119-109) հաղթանակը շնորհեցին Ֆլոյդ Մեյվեզերին: Պրոֆեսիոնալ ռինգում անպարտելի 33-ամյա Մեյվեզերը 41-րդ հաղթանակը տոնեց: Իսկ 38-ամյա Շեյն Մոզլին անցկացրած 53 մենամարտերում 6-րդ պարտությունը կրեց:**



**Մենամարտից հետո կայացած մամուլի ասուլիսում քաշային հինգ կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Ֆլոյդ Մեյվեզերը նշել է, որ միտումնավոր էր փոխել մարտավարությունն ու ուժային, ագրեսիվ մարտ էր վարում, որպեսզի հաճույք պատճառեր հանդիսականներին. «Ցանկանում էի բռնցքամարտի սիրահարներին ցույց տալ այն ամենը, ինչի համար նրանք գումար էին վճարել: Եվ դա ինձ հաջողվեց: Ուրախ եմ, որ մեզ վերջապես հաջողվեց հանդիպել ռինգում: Այս մենամարտին բռնցքամարտի սիրահարները վաղուց էին սպասում եւ նրանք արժանի էին դրան:**

**Այժմ ցանկանում եմ տուն վերադառնալ եւ ժամանակն անցկացնել ընտանիքիս հետ: Իմ նպատակն է մենամարտել աշխարհի ուժեղագույն բռնցքամարտիկների հետ եւ լինել լավագույնը: Եթե Մենի Պակյաոն ցանկանում է մենամարտել, դժվար չէ ինձ գտնելը: Մենք փորձեցինք մի քանի ամիս առաջ մենամարտ կազմակերպել, սակայն չստացվեց: Խոնարհվում եմ Մոզլիի առաջ: Նախկինում նա հիմնախնդիրներ ուներ դոպինգի հետ կապված, սակայն Մոզլին իսկական մարտիկ է: Նա համաձայնվեց դոպինգ ստուգման ենթարկվել: Եթե Պակյաոն էլ նման կերպ վարվի, մենք կհանդիպենք ռինգում: Եթե նա չհամաձայնվի, մենամարտը չի կայանա»:**

**Մրցակցի մասին գովեստով է խոսել Շեյն Մոզլին. «Իմ հարվածներից նա ցնցված էր: Նա դեռ երբեք նման իրավիճակում չէր հայտնվել: Սակայն Մեյվեզերն իսկական չեմպիոն է: Նա շարունակեց մենամարտը եւ ապացուցեց, որ այսօր ինքն ուժեղագույնն է: Նա կարողացավ կարգավորել իր գործողությունները, իսկ ինձ դա չհաջողվեց: Մտադիր եմ տանը դիտել մենամարտի տեսագրությունը: Կհանգստանամ որոշ ժամանակ, այնուհետեւ կմտածեմ հետագա կարիերայիս մասին»:**

# Բաժանվեցին խաղաղությամբ

**Շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար Վիշվանաթան Անանդի եւ Վեսելին Թոփալովի մրցամարտի 5-րդ եւ 6-րդ պարտիաները խաղաղ ելք ունեցան: 5-րդ պարտիայում մրցակիցները հաշտություն կնքեցին 44-րդ քայլին, իսկ հաջորդ պարտիայում ոչ-ոքի գրանցվեց 58-րդ քայլին:**

**6 տուրից հետո 3,5-2,5 հաշվով մրցախաղը շահում է Անանդը: Նա երկու հաղթանակ է տոնել սպիտակներով 2-րդ եւ 4-րդ պարտիաներում: Թոփալովը եւս միակ հաղթանակը տոնել է սպիտակներով` առաջին տուրում: Այնպես որ մրցակիցներն առայժմ կարողանում են իրացնել սպիտակ խաղաքարերով խաղալու առավելությունը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 03/05/2010 22:20 Page 1



# Մշեցու հնագույն տոհմից սերված հերոսը

«Սասունցի Դավիթ» աշխարհազորային կառույցի անմահ հերոսների համաստեղությունում իր ուրույն տեղն է զբաղեցնում կործանիչ հակատանկային դիվիզիոնի դասակի հրամանատար, լեյտենանտ **Մյասնիկ Ռայելի Գասպարյանը**: «Սասունցի Դավթի» հիմնադիր անդամի հերոսական կերպարը ներկայացվել է ոչ միայն հանրապետության մամուլում, այլեւ ռուսական ինտերնետային կայքէջում: Քաջ հայորդու հերոսական կերպարը փորձենք ներկայացնել՝ որոշ հղումներ կատարելով նրա մոր՝ **Սուսաննա Գասպարյանի** խոսքերին, որն անձամբ եղել է ԼՂՀ-ում, իր որդու անցած մարտական փառավոր ուղու վայրերում եւ նահատակման բնակավայրում՝ ԼՂՀ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում, եւ գրել է բանաստեղծությունների մի հուզական շարք:



«Արցախյան պատերազմին մասնակցել են չորս որդիներիցս երեքը: Բոլորն էլ քաջաբար են կատարել իրենց պարտքը հայրենիքի հանդեպ, եւ երկուսը բաց ճակատով վերադարձել են տուն: Նահատակի ճակատագրին արժանացավ միայն Մյասնիկս: Բացի մշեցուն բնորոշ արյան կանչից, տղաներիս Արցախյան պատերազմ գնալը պայմանավորված էր նաեւ պատանի հասակից նրանց համակած վրեժի եւ արժանապատվության հզոր զգացումով: Հայրս պատմում էր, որ Եղեռնի ժամանակ թուրքերը 370 հոգու փակել են մեծ մառագում եւ այրել: Հրաշքով փրկվել է ընդամենը մեկ մարդ: Նրանց նվիրված հուշաքար է կանգնեցվել Արթիկի շրջանի Լեռնակերտ գյուղում: Տղաներս, մանավանդ Մյասնիկս, միշտ վրդովվել են, թե ինչու այդ մարդիկ չեն դիմադրել թուրքերին: Եվ պատանի հասակից նրանց հոգում ձեւավորվել էր մշեցուն բնորոշ խոցված արժանապատվության եւ վրեժխնդրության զգացում: Մյասնիկս մի քանի ամսական էր, որ ընտանիքով տեղափոխվեցինք Արթիկ քաղաք: Նա սովորել եւ ավարտել է Արթիկի թիվ 4 միջնակարգ դպրոցը եւ ընդունվել է Երեւանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտ: Մանկուց մեծ հակում է ունեցել դեպի գիտելիքը, դեպի ուսումը եւ ինստիտուտում էլ գերազանց էր սովորում ու դասախոսական կազմից ամենասիրված ու ամենահարգված ուսանողներից էր»: Ինստիտուտի դասախոսներից կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ռ. Մխիթարյանը նրա մահվան առիթով «Հայ զինվոր» թերթում գրել է. «Կյանքը կարծես մի վայրկյան կանգ առավ, երբ ստուգարքի խունացած գրքույկի մեջ տեսա նրա լուսանկարը եւ բոլոր գերազանց գնահատականների շարքում նկատեցի իմ գրանցած «գերազանցը»: Մյասնիկը կուրսի հոգին էր, ազնիվ ու նվիրված ընկեր, ակտիվ ու եռանդուն էր նաեւ հասարակական աշխատանքներում, բազմաթիվ հետաքրքրական ու բովանդակալից նախաձեռնությունների հեղինակ էր: Նրա մարտական հայրենանվեր հերոսացումը սկսվել է Ոսկեպար գյուղի պաշտպանությանը մասնակցելուց, որի ժամանակ էլ իր գործունեությամբ արժանացել է ազատամարտիկ ընկերների բացառիկ հարգանքին ու սիրուն: 1990-ին հունիսին Հառիճավանքում, երբ «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատի ամենակրտսեր անդամը՝ Մյասնիկը ծնկաչոք համբուրելով եռագույնը, դեռեւս նոր կոշտացած տղամարդու ձայնով արտաբերեց՝ «Երդվում եմ կռվել մինչեւ հաղթանակ», հրացոլք աչքերի խորքում փայլատակեց մշեցու հնագույն տոհմից սերված հայորդու վճռական, անբեկանելի ոգին...»:

«Սասունցի Դավիթ» աշխարհազորայինի հիմնադիր հրամանատար Համլետ Հովսեփյանի կազմած մարտական ուղում մասնավորապես նշվում է, որ Մյասնիկ Գասպարյանը «...զենքը ձեռքին մարտնչել է Ոսկեպարում, Լաչինում, Շուշիում՝ ազատագրելով հայկական շեները ու օջախները: Բոլոր մարտական գործողություններին Մյասնիկը մասնակցել է խիզախությամբ, առանց վախի զգացումի: Մշտապես աչքի է ընկել անձնվիրությամբ եւ անձնազոհությամբ: ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորումից հետո Մյասնիկ Գասպարյանն ընդունվում է ծառայության Ստեփանակերտի հակատանկային գումարտակում: Նա բազում սխրանքներ է գործել նաեւ Լիճք գյուղի մատույցներում՝ ընկերների հետ ոչնչացնելով թշնամու 12 տանկ: Բռնագրավել է թշնամու 2 տանկ: 1992 թվականի նոյեմբերի 16-ին Մյասնիկն իր յոթ մարտական ընկերների հետ ԼՂՀ Մարտունու շրջանի Ճարտար գյուղի մատույցներում մարտական առաջադրանք կատարելիս ընկնում է շրջապատման մեջ: Չընկրկելով հակառակորդի գերակշռող ուժերի առջեւ, տղաները մարտը վարում են մինչեւ վերջին փամփուշտը, եւ երբ թշնամու զինվորները մոտենում են՝ վերջին նռնակով պայթեցնում են իրենց՝ ոչնչացնելով նաեւ թշնամու մի քանի զինվորների:

Մյասնիկ Գասպարյանը հետմահու արժանացել է ՀՀ եւ ԼՂՀ «Արիության համար» մեդալով: Ապրիլի 30-ին Մյասնիկ Գասպարյանը կդառնար 40 տարեկան:

ՌՈՒԶԱՆ ԱՊՐԵՍՅԱՆ

# Փոխհատուցման պահանջներով գիտաժողով Անկարայում

*1-ին էջից*

**Օտար գիտնականներից գիտաժողովին մասնակցել են Դեյվիդ Գաունտը (ցեղասպանագետ, հեղինակ «Կոտորածներ, դիմադրություն, պաշտպաններ: Մահմեդական-քրիստոնեական հարաբերությունները Արեւելյան Անատոլիայում Ա. համաշխարհայինի ժամանակ» գրքի), Անրի Թերիոն (փիլիսոփայության դասախոս Վուստերի պետհամալսարանում), Խաչիկ Մուրադյանը («Արմինյըն Ուիքլի» շաբաթաթերթի խմբագիր, Քլարկ համալսարանում դոկտորականի վրա աշխատող ուսանող), Հարրի Բարսեղյանը (Բոստոնում «Հրանտ Դինքի բարեկամների» ընկերության նախագահ), Էյլիան Ուիլյամսը (գրող-ակտիվիստ Ուելսից): Բացի Գաունտից, մյուսները քննարկումների ժամանակ անդրադարձել են «Հայկական հարցը: Ի՞նչ պետք է արվի եւ ինչպե՞ս» թեմային: Դրա շուրջը խոսել են նաեւ Նշանյանը, Դեմիրերը եւ Զարաքոլուն: Խոսքը հիմնականում փոխհատուցման եւ արդարության վերականգնման մասին է եղել: Թերիոն մասնավորապես նշել է, որ «Թուրքիան պարտավոր է վերադարձնել բոլոր բռնագրավված ինչքերը, ներառյալ՝ հողային, նյութական եւ եկեղեցապատկան ունեցվածքները»: Նշանյանը կտրականապես հակադարձել է՝ ասելով, որ դրա ժամանակը չէ, եւ որ խնդիրը դրանով փակուղի կմտնի: Դեմիրերը եւ Ուիլյամսը նույնպես պաշտպանել են Թերիոյին:**

**«Լքված կալվածքների» շուրջը քննարկումները նույնպես մեծ հետաքրքրություն են առաջացրել: Դրանց մասնակցել են գրողներ Աշլը Կոմուն, Նեւզատ Օնուրանը, Մեհմեդ Պալաթելը (որի մագիստրատուրայի ատենախոսության թեման հենց բռնագրավված կալվածքներն են եղել) եւ Ջեմիլ Էրթեմը:**

**«Պաշտոնական գաղափարախոսական ժխտումը եւ բնաջնջման քաղաքականությունը «Միության եւ առաջադիմության կոմիտեից» մինչեւ քեմալիզմ» թեման քննարկել են գիտնականներ Օսման Օզարսլանը, Թումա Չելիքը, Չեթինօղլուն եւ Բեշիկչին, «Հայոց ցեղասպանությունը պատմական տեսանկյունից» թեման արծարծել են Ադիլ Օքայը, Նահիր Սայինը եւ Օրանը:**

**Կոնֆերանսի նշանակությունը, ըստ հաղորդագրության, այն է եղել, որ առաջին անգամ ոչ թե սոսկ Ցեղասպանության փաստի մասին է խոսվել, այլ բռնագրավված ունեցվածքի վերադարձի, փոխհատուցման եւ առաջ շարժվելու մարտահրավերների մասին: Հատկանշական է եղել նաեւ, որ ժխտողական քաղաքականության կողմնակիցներ չեն մասնակցել դրան: Չի թույլատրվել անցկացնել ցույցեր գիտաժողովի դեմ:**

Հ. Ծ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

USAID FROM THE AMERICAN PEOPLE

FORECAST
Human and Institutional Capacity Development Project

**Job Vacancy Announcement**

**OPENING DATE:** **April 30, 2010**
**CLOSING DATE:** **May 10, 2010**

**Title:** Business Planning Specialist / Gyumri Technopark Strategy Implementation

**Location:** Yerevan/Gyumri, Armenia

**Job Description:** The United States Agency for International Development (USAID) Mission to Armenia and the Academy for Educational Development (AED/Armenia) in collaboration with the RA Ministry of Economy are recruiting one local expert for the implementation of the master plan for creating a technopark for high-technology businesses in Gyumri. The incumbent will be working full time starting from May 2010 for a period of up to 40 working days. The Specialist will report to Gyumri Technopark Development Working Group. The program is funded by USAID through the Human and Institutional Capacity Development Project administered by AED.

**Job Responsibilities:**
- Work as a team with the international expert on strategy implementation for Gyumri Technopark
- Study and analyze the high technology sector in Armenia and in Gyumri in particular
- Study and analyze the strategic documents, plans, researches and the current projects related to development of Gyumry Technopark
- Prepare, facilitate (if needed) and summarize discussions, submit proposals on technopark strategy implementation resulting from the discussions
- Organize consulting meetings with beneficiaries and representatives of various sectors

**Required Qualifications:**
- University degree in management, business administration or other relevant sphere
- Relevant experience in business planning, organizational design, development and research
- Excellent communication and organizational skills
- Excellent analytical skills
- Excellent writing skills
- Fluency in English language

**HOW TO APPLY:**
Interested applicants should apply by submitting below mentioned documents to AED/Armenia office at aed@arminco.com. Applications will be accepted until **10:00 AM on Monday, May 10, 2010.**

**Required documents:**
- A letter including:
- Applicant's specific qualifications for the vacancy s/he is applying;
- Applicant's available date to start the work, work duration, as well as, the availability to work full-time;
- CV with detailed highlight of relevant experience
- Names and contact information for two referees
- A sample written document prepared by the applicant during her/his working or similar experience

***For further information please download the Scope of Work.***

***http://www.aed.am/announcement.php***

Ռիելթոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառք՝
- Բնակելի տուն: Ընդ.մակերեսը 147.5 քմ, եւ 0.04823 հա հողամաս: Հասցեք. ք. Երեւան, Քանաքեռ 14 փ., տուն 9/1: Մեկնարկային գինը՝ 18700000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 06.06.2010թ-ից մինչեւ 30.08.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել **www.akson.am**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամի 2009 թ. գործունեության մասին**

Հիմնադրամի լրիվ անվանումը «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամ

Հիմնադրամը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարի 12.01.2001թ. թիվ 63 հրամանով, պետական գրանցման վկայական 03Ա 075152:

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երեւան, Խանջյան 50, հեռ. 573057

Ֆինանսական տարում Հիմնադրամի տնօրենը, Հոգաբարձուների խորհրդի անդամները, աշխատակազմը չեն օգտվել Հիմնադրամի միջոցներից:

Իրականացված ծրագրերը՝
- Օժանդակություն Հայաստանի Թեքեյան Մշակութային Միավորմանը՝ 4,970 հազ. դրամ, ՀՕՖ երեխաների աջակցության կենտրոնին՝ 245 հազ. դրամ, «Փրկություն»հաշմանդամների միությանը՝ 65 հազ. դրամ;
- Վ. Թեքեյան ամենամյա մրցանակաբաշխության 2 մրցանակի սահմանում՝ 794 հազ. դրամ;

Հիմնադրամի ֆինանսավորման աղբյուրները ձեւավորվել են Հիմնադրամի գույքի վարձակալությունից, ինչպես նաեւ անհատ նվիրատուներից ստացված միջոցներից:

Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը կազմում է՝ 34,333 հազ. դրամ:

Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը կազմում է 6,074 հազ. դրամ:

Հիմնադրամի 2009թ. աուդիտն իրականացրել է «Լոնդոն Բիզնես Գրուպ»աուդիտորական ընկերությունը:

Սույն հաշվետվությունը հաստատված է Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հիմնադրամի տնօրեն Ա. Ծուլիկյան
Գլխ. հաշվապահ Ա. Հարությունյան

**ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի կից ներկայացվող հաշվապահական հաշվեկշիռը՝ 2009 դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է հիմնադրամի ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրինք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության եւ բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ ընտրանքային եղանակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական ենթադրությունների եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները հիմնադրամի ֆինանսական վիճակի՝ առ 31-ը դեկտեմբերի 2009 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր:

աուդիտոր՝ Գ. Ալեքսանյան
տնօրեն՝ Տ. Զորյան
22 ապրիլ 2010թ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 3.05.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: